





334

9-16



334  
9-16

ՀՐԱՏԱՐԱԿ. ԲԱԳԻԱՅ Հ. Կ. Մ. ՀՈՂԱՑԻՆ ՍԵԿՑԻԱՑԻ



25.834

12 MAR 2013

05 JAN 2010

334  
9-16 ան

ՀՐԱՄԱՆԱԿ. ԲԱԳԻԱՅ Հ. Կ. Մ. ՀՈԴԱՅԻ ՍԵԿՐԵԴԻ

300  
1204-94

# ԿՈՊԵՐԱՑԻԱ

Ա Ա Ա Ա Ի.

Դասախոսութիւն

ԱՍԹԽՈՎ. Գ.Ա. Ա. ԶԵՐԱՄ.

ԳԻՒՆ Է 20 ԿՈՊ.

ԹԻՖԼԻՍ  
Տպարան ՀՊԹԽԱՀ, Գանովիկայա Հ. Յ.  
1909



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կօօպերացիայի կամ համագործակցութեան գաղափարը նոյնչափ հին է, որչափ մարդկութիւնը: Սակայն կօօպերացիան այնպէս, ինչպէս հասկանում ենք ներկայում և կօօպերատիւ ընկերութիւնների այն տեսակները, որոնք գոյութիւն ունին ներկայում, իրենց սկզբնաւորութիւնը առել են իրապէս տասնակիններորդ գարու սկզբից: Թէև զբանից առաջ եղել են անջատ փորձեր, սակայն այդ փորձերը անյաջողութեամբ են վերջացել: Անվիճելի են կօօպերային ընկերութիւնների տւած օգուտները, նրանց բարերար ազդեցութիւնը մանաւանդ գիւղացիների համար: Հաղարաւոր ընկերութիւններ, որոնք գոյութիւն ունին այժմ Եւրոպայում, գալիս են մի անգամ ևս ապացուցանելու, որ կօօպերացիան ամենազօրեղ միջոցներից մէկն է աշխատաւոր բանւորի և գիւղացիութեան տնտեսութիւնը բարելաւելու: համար: Այս պերճախօս թւերը, որ մենք քաղում ենք Եւրոպայի կօօպերատիւ ընկերութիւնների ստատիստիկայց, բաւական համոզիչ փաստեր են ընդունելու կօօպերացիան, որպէս մի անհրաժեշտութիւն մեր քայլքայւած տնտեսութիւնը

վերականգնելու համար: Իսկ, որ ամենազբլ-  
խաւորն է, անջատ աշխատաւոր ուժեղը մի-  
ացնելով՝ մենք աւելի արդիւնաւէտ ենք  
դարձնում երկրի արտադրութիւնները: Բա-  
ցի այդ առաւելութիւններից, կօպերացիան  
մի զօրեղ միջոց է երկրագործական տագ-  
ուապների առաջն առնելու համար, ուստի  
այդպիսի մի ոյժ անտես առնել՝ նշանակում է  
դաւաճանել աշխատաւորի շահերին, և պիտի  
աշխատել օր առաջ իրականացնել կօպե-  
րացիան իր բոլոր ճիւղերով:

Ահա այդ նպատակով հարկաւոր է գրա-  
ւոր և բանաւոր պրոպագանդ. պարբերական  
մամուլը յաճախ պիտի զբաղւի այդ հարցով.  
ինտելիգենցիան նախաձեռնող պիտի հանդի-  
սանայ և ամեն տեղ, ուր հնարաւոր է, պիտի  
հիմնել կօպերատիւ ընկերութիւններ. գիւ-  
ղատնտեսական, բարեգործական և կուլտու-  
րական ընկերութիւնները միացած ուժեղով  
պիտի առաջ մղեն այդ շարժումը. նրանք  
պիտի իրականացնեն կօպերացիայի գեղե-  
ցիկ գաղափարը նոյն իսկ մեր ամենախուլ  
անկիւններում: Այն ժամանակ կազմատենք  
մեր բազմատանջ աշխատաւորին վաշխա-  
ռուների, բուռնցըների ճանկերից. այն ժա-  
մանակ կը վերականգնենք մեր գիւղացիու-  
թեան բայքայւած անտեսութիւնը և հնա-  
րաւորութիւն կը տանք աշխատաւորին զար-

գացնելու իր մտաւոր ընդունակութիւնները:

Հայկական ընկերութիւններից Բագւայ  
Կուլտուրական Միութիւնը առաջինն էր, որ  
հիմնեց գիւղական բանկեր, ազատելով գիւ-  
ղացիներին վաշխառւների ճանկերից: Կուլ-  
տուրական Միութիւնը նոյն ուղղութեամբ  
պիտի շարունակի իր գործունէութիւնը, բա-  
նալով մանր վարչի ընկերութիւններ, հիմ-  
նելով արտադրողական և սպառողական կօ-  
պերատիւ ընկերութիւններ, հաստատելով  
կաթնատնտեսական շարժական դպրոցներ և,  
վերջապէս, կազմակերպելով ժողովրդական  
դասախոսութիւններ:

Այս դասախոսութիւնները, որ հրատա-  
րակում ենք կուլտուրական Միութեան մի-  
ջոցներով, կարդացւել են Թիֆլիսում նոյն  
Միութեան Հոգային սեկցիայի նախաձեռ-  
նութեամբ: Այժմ հրատարակում ենք դասա-  
խոսութիւնների առաջին մասը, իսկ երկ-  
որդ մասը «Գիւղատնտեսական կօպերա-  
տիւ միութիւններ» վերնագրով կը հրատա-  
րակւի մօտիկ ապագայում:

Հաւատացած լինելով, որ կօպերա-  
ցիան կը վերականգնի մեր գիւղացիութեան  
անտեսութիւնը, որ նա կը տարածի գիւղա-  
տնտեսական գիւղելիքները, որ նա բոլոր աշ-  
խատաւորներին կազատի միջնորդ տղրուկ-  
ներից, մի խօսքով՝ հաւատացած լինելով՝ որ

Կօօպերացիան մեր երկրին կը տայ նոյն  
բարիքները, ինչ որ Արևմ. Եւրոպային, ուստի  
և մենք ամեն կերպ կաշխատենք մեր ուժե-  
րի համեմատ գործել, տարածելով կօօպե-  
րացիայի գեղեցիկ գաղափարը, ընդհանրաց-  
նելով, իրականացնելով և ամեն տեղ հիմնե-  
լով կօօպերատիւ զանազան տեսակի ընկե-  
րութիւններ:

Խօսք և գործ, — ահա մեր նշանաբանը,  
և այդ ուղղութեամբ կընթանանք առաջ:

ՍԱՄՍՈՆ ԳԱԼՅՉԵԱՆ

## I. ԳԸՄԵԽԾՈՎՈՒԹԻՒՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՍ ԱԿՆԱՐԿ

(ՕՌԻՎԵՆ, ՖՈՒՐԻԷ, ՖԵԳԵՐԷ)

Տասնեիններորդ դարու սկզբին Արե-  
մանեան Եւրոպայում տեղի ունեցան մի շարք  
պատմական խոշոր դէպքեր թէ քաղաքական,  
թէ մտաւոր և թէ հասարակական ու տըն-  
տեսական աշխարհում: Դէպքերը այնչափ  
արագ էին իրար հետեւում, որ թւում էր թէ  
մի քանի յաջող փորձեր — և ահա հասարակա-  
կան կազմը կը մտնի նոր շրջան, մարդկու-  
թիւնը պիտի ապրի նոր կարգերի տակ, փո-  
փոխելով այն բոլոր անպէտք կարգերը, որ  
մնացել էին ֆէօդալական և մանր-բուրժու-  
ական շրջաններից:

Ֆրանսիական յեղափոխութիւնից (1789)՝  
յետոյ տիրող բէակցիան մի կողմից, որ սար-  
սափով էր նայում ամեն մի ընկերակցու-  
թեան գաղափարին, միւս կողմից Եւրոպայի

ազգաբնակութեան ծայրայել չքաւորութիւնը մտածողների և ժողովրդի վշտերով ապրողների առաջ գրել էին մի հզօր պահանջ՝ գտնել փրկութեան մի ելք, որոնել նոր միջոցներ, որպէսզի մարդկութիւնը կարողանայ ազատել այն հրէշի ճիրաններից, որի անունն է չքաւորութիւն, տնտեսական ստրկութիւն։ Ոգեկորութիւնը տիրել էր բոլորին. մարդկութեան անկեղծ բարեկամները, նրա մտածող ուժերը երևան եկան նոր ուսմունքներով, նոր նախագծերով և ջանացին ազատել թշւառութեան մէջ կորած ժողովրդին. սակայն նրանց բոլոր ջանքերը ի զուր եղան, չնորհիւ նրանց վարդապետութիւնների սխալ հիմունքների։ Այդ շրջանը, որ յայտնի է ուտօպիստ սօցիալիստների շրջան անունով, ունեցաւ իր դրական հետքերը. նա լայն բացեց քննադատութեան ճանապարհը և ցոյց տւեց տիրող հասարակական և քաղաքական կարգերի անպէտքութիւնը։ Ոչչափ որ նսեմացնենք ուտօպիստ սօցիալիստներին, այնուամենայնիւ անուրանալի է նրանց կատարած դերը սօցիալիստների շրջան ազատ մաքերի քարոզութեան և այդ գաղափարների տարածման գործի մէջ։ Բնկերակցութեան գաղափարների արթնանալը, քննադատական ոգու գարգանալը և այլն պարտաւոր ենք ուտօպիստ սօցիալիստների

անխոնջ և եռանդում գործունէութեանը։ Այդ շրջանի գործիչների մէջ առաջին տեղն են բոնում ֆրանսիացի Կարլոս Ֆուրիէն և անգլիացի Ռոբէրտ Օուլէն. երկու խոշոր դէմքեր, որոնք իրենց ամբողջ կեանքը զոհել են ժողովրդի բարեկեցութեան համար, որոնք գիշեր-ցերեկ մտածել, նախագծել են միջոցներ՝ փրկելու մարդկութիւնը չքաւորութեան ճիրաններից, փոխելու հասարակական կազմը աւելի լաւ և կատարեալ կարգերով և այդպիսով երջանկացնելու ամբողջ մարդկութիւնը։ Ֆուրիէն ֆրանսիայում և Օուլէնը Անգլիայում եղան առաջինները, որոնք քարոզելով ընկերակցութեան գաղափարը, փորձեցին իրականացած տեսնել իրենց տեսչանքները։ Ահա այդ երկու խոշոր դէմքերի հետ անհրաժեշտ է գոնէ համառօրէն ծանօթանալ և ապա անցնել ընկերակցութիւնների գաղափարը իրականացնելու միջոցներին։

Թոոյլ և հիւանդու կազմւածքով, Ֆուրիէն (ծն. 1772) մանկութիւնից սիրում էր առանձնութիւնը և այդ նրա մէջ արթնացրեց վառ երևակայութիւն, որը նկատելի է նրա ամբողջ սիստէմի մէջ։ Իր հօր մահւանից յետոյ անկարող լինելով շարունակել ուսումը, ստիպւած էր իր ապրուստը հայթայթել գործակատարի պաշտօն կատարելով զանա-

զան վաճառականների մօտ; Մօտից լաւ ծառոթ լինելով վաճառականութեանը, Ֆուրիէն էլ սկսում է վաճառականութեամբ պարապել, սակայն 1793 թւին Լիօնի ապըստամբութեան ժամանակ զրկւեց իր գոյքից և երկու անգամ ձերբակալւեց: Նոյն թւականի օգոստոսի 23-ին նա մտնում է դիւտրական ծառայութեան մէջ, բայց շուտով թողնում է հիւանդութեան պատճառով; յետոյ պարապում է բօրսայի աշխատանքներով: Զանազանակերպութիւն սիրող քնաւորութեամբ, նա սկսում էր կամ մէկ, կամ միւս գործը և ամեն տեղ ցոյց էր տալիս իր անհանդիստ բնաւորութիւնը: Երկար ժամանակ նա տատանումների մէջ էր և չէր կարողանում գտնել իր ուղին. երբեմն պարապում էր զրականութեամբ, երբեմն զանազան նախագծեր էր ներկայացնում կառավարութեանը և երբեմն էլ իր երևակայութիւնների մէջ այնչափ հեռու էր գնում, որ կողմանակի մարդկանց ծիծաղ և դժգոհութիւն էր պատճառում: Վերջապէս 1803 թւին նա հրատարակում է իր մի աշխատութիւնը՝ «Triumvirat continental et paix perpetuelle sous trente ans», ուր արտայայտում է իր մաքերը համարձակ և գուշակող տօնով, որ յատուկ է նրա բոլոր հեղինակութիւններին: Իր քաղաքական երազներով և գուշակու-

թիւններով գրաւեց նապօլէօնեան ոստիկանութեան ուշագրութիւնը, սակայն նրան հանգիստ թողին շնորհիւ իր համեստ և բարի բնաւորութեան: Հինգ տարուց յետոյ լոյս է տեսնում նրա մի խոշոր աշխատութիւնը՝ «Théorie des quatres mouvements et des destinées générales», որով նահիմք է դնում իր հասարակական-տնտեսական վարդապետութեան և ցոյց է տալիս իր քննադատական ոգու ոյժը, որ աւելի ցայտուն կերպով արտայայտում է նրայետագայ աշխատութիւնների մէջ: Սակայն նրա քննադատական ոգուն հակադրում է այն զրական հասկացողութիւնը, որ բղխում է Աստուծոյ, մարդու և բնութեան վրայ ունեցած ըմբռնումից: Ֆուրիէի կարծիքով, մարդկութեան թշւառութեան և տնտեսական անարխիայի ամենազօրեղ թշնամիները «չքառորութիւնը և անբարոյականութիւնն» են: Այնուհետև որոնելով զրա շարժառիթները, ֆուրիէն գալիս է այն եղրակացութեան, որ մարդկութեան միմիայն  $\frac{1}{3}$  մասն է ապրում երական աշխատանքով, իսկ մնացածները ձրիակերներ են, որոնք փոխանակ նպաստելու կուտուրայի զարգացմանը, ընդհակառակութեան աւելի ևս աւելում են այն: Անա թէ ինչպիսի ստորաբաժանումներ է անում ֆուրիէն այդ պարզիաների վերաբերմամբ.

1) տան սպասաւորները, տանտիկնները և երեխանները, որոնց անւանում է տնային պարագիտներ. 2) ծովային և ցամաքային գործը, գործատէրերի կէսը, վաճառականների  $\frac{9}{10}$  մասը, ցամաքային և ծովային գործականների  $\frac{2}{3}$ -ը, հարկահաննները և այլն. սրանց անւանում է հասարակական պարագիտներ. 3) օրէնսդէտները, փաստաբանները, հարուստները, բանտարկեալները, հիւանդները և ամեն տեսակ այլասերւածները (անթարոյական կանաք, գողեր, աւազակներ և այլն), որոնք թշնամաբար են վերաբերւում դէպի արդիւնաբերութիւնը և արտադրելու փոխարէն՝ աւելի ևս պահանջում են նոր ծախքեր. ժանդարմների և չինոֆիլիկների պահպանութիւնը, որոնք դարձեալ արտադրող տարրեր չեն. այսպիսիններին ֆուրիէն անւանում է լրացուցիչ պարագիտներ: Եւ եթէ այդպիսի կարգերի տակ մարդկութեան  $\frac{1}{3}$ -ի գործունէութիւնը, նրա աշխատանքը կանոնաւոր կազմակերպւած լինի, ապա թշւառութիւնը և չքաւորութիւնը հսկայական չափեր չէր ստանալ: Հետեւապէս արդիւնաբերութեան արդի կազմակերպութիւնը, ըստ ֆուրիէի, միանգամայն անպէտք է և նեռու է վանում ընկերակցութեան, համագործակցութեան գաղափարը, մանր-արդիւնաբերութիւնը. միւս կողմից այդպիսի կազմը

մարում է բանուորի հետաքրքրութիւնը. բացի դրանից, մարդկութեան աշխատանքի պայմանները այնպէս են, որ աշխատաւորը իր վարձը ստանում է ի հաշիւ մէկ ուրիշի. այդտեղից ծագում են հակադիր շահերը. առողջի շահը դէմ է ծախողի շահին, բանուորի շահը հակառակ է գործակատարի շահին և այն. Ահա այդ դրութեան հետևոնքը լինում է ընդհանուր դժգոհութիւն, անիշխանութիւն և էգօիզմի զարգացում: Տեսանք, որ Ֆուրիէն իր կեանքի խոշոր մասը անցի է վաճառականութեան մէջ, ուստի ծանօթ լինելով նրա հիմքերի հետ՝ սոսկալի հարւածներ է հասցնում վաճառականութեանը, անւաններով այդ ոչ-անարդիւնաբերող մի աշխատանք: Մարդկութեան թշւառութեան և տնտեսական չքաւորութեան պատճառներից մէկը Ֆուրիէն գտնում է անբարյականութեան մէջ և ահա դրա դէմ նա առաջարկում է մի շարք ֆանտաստիկ միջոցներ, որոնք երեմն իրար հսկասում են: Բայց ամենից բնորոշ և տարօրինակ է նրա լոմբանումը Աստւածութեան, բնութեան և մարդ-անհատի հառկացողութիւնների վերաբերմամբ: «Չէ՞ որ Աստւած բոլորին միատեսակ է ստեղծել, չէ՞ որ Աստուծոյ բոլոր ստեղծածները լաւ են,—բացականչում է Ֆուրիէն, —ուրեմն ինչի՞ մէջ է կայանում

մարդկութեան ընդհանուր դժգոհութիւնը.— հասարակական կարգերի սիսալ հիմքերի, տնտեսական շահերի հակադրութիւնների մէջ. ահա այն գլխաւոր շարժառիթները, որ եթէ վերացւին, մարդկութիւնը կազմաւի թշւառութեան և չքաւորութեան մահաբեր հարւածներից»: Եւ այդ նպատակով ֆուրիէն առաջարկում է մի շարք միջոցներ. իր վառերևակայութեան շնորհիւ երեխն այնպիսի նկարագիրներ է տալիս, որ թւում է թէ երաժների և տեսիլների աշխարհների մասին է խօսում: Նախ քան իր երազած մարդկութեան համայնքների կազմակերպելը, ֆուրիէն առաջարկում է ուսումնասիրել մարդու հոգեկան աշխարհը: Նրա կատարած դիտողութիւններից երեսում է, որ մարդը տասներկու տեսակ ձգտումներ ունի. առաջին—շքեղութեան ձգտումն, այսինքն զգայարանական բաւականութիւն (տեսողութիւն, լուղութիւն և այլն), երկրորդ—իմբարգական ձգտումն (բարեկամութիւն, ընկերութիւն և այլն), երրորդ—սերիաների ձգտումն (ինտերիզների, զանազանակերպութիւնների և այլն), և այլն, և այլն: Մի խօսքով՝ բոլոր տասներկու ձգտումները միանալով կազմում են 810 տեսակ բնաւորութիւններ: Հասարակական կարգերը այն ձևով պիտի դասաւորւած լինին, որ բաւարարութիւն տան մարդ-

կանց տարբեր ձգտումներին, մինչդեռ ներկայ կազմը չի կարող այդ բաւարարութիւնը տալ Նման բնաւորութիւնների ազատ խըմբակցութիւններ, արհեստի և պարապմունքի ազատ ընտրութիւն, մէկ պարապմունքից միւսն անցնելու հնարաւորութիւն, մի խօսքով՝ այնպիսի կարգեր, ուր մարդանաստը հնարաւորութիւն ունի բաւարարութիւն տալու իր բոլոր պահանջներին, ահա այն ժամանակ կը վերանայ ընդհանուր դժգոհութիւնը, այն ժամանակ կը լինի երջանկութեան, ազատ աշխատանքի շրջան, այն ժամանակ աշխատանքը ոչ թէ տաժանակիր կը լինի, այլ գուրեկան և հաճելի: Եւ այդպիսի հասարակական կարգեր ստեղծելու համար ահա թէ ֆուրիէն ինչ է առաջարկում. «մարդիկ կը միանան և կը կազմեն Փալանգները, իւրաքանչիւրը 1600—1800 հոգուց, որ եթէ ծերերը և երեխաները չըհաշենք՝ ըստացւի աշխատանքի ընդունակ 810 հոգի, որոնք կը համապատասխանեն 810 տեսակ բնաւորութիւններին: Իւրաքանչիւր Փալանգի կենարոնում կը լինի մի հսկայ շքեղ շինութիւն (Փալանստեր) ճոխ դահլիճներով, ընթերցարանով, կօնցերտի և բալերի համար ընդարձակ սրահներ և այլն, և այլն»: Այդ բոլորին իբրև հիմք ընդունում է արտադրողական և սպառողական միութիւն-

ների գաղափարը։ Այսպէս օրինակ, ըստ  
Ֆուրիէի, «300 ընտանիք միանալով՝ կունե-  
նան մի լաւ և յարմար արհեստանոց, փո-  
խանակ մի-մի հատ փոքրիկ արհեստանոց-  
ների, կունենան մի քանի լաւ գութաններ,  
փոխանակ 300 հատ հասարակ գութանների  
և այլն»։ Ֆուրիէի կարծիքով, այդ դէպքում  
աշխատանքը կը լինի աւելի արդինաւէտ,  
աւելի զբարիչ։ Համայնքի անդամներից իւ-  
րաքանչիւրը կը պարապի այնպիսի աշխա-  
տանքով, որ աւելի համապատասխանում է  
անհատի ձգտութմներին, նրա բնաւորութեա-  
նը։ Ֆուրիէն հակառակ է կօմունիզմին.  
Ընդհակառակը նա անհատական իրաւունք-  
ներին, անհատական աշխատանքին խոշոր  
տեղ է տալիս։ Դիւրութեան համար ամեն  
մի անհատի աշխատանքը ժողովում են կեն-  
տրոնական շտեմարանը, որտեղից կարելի է  
ստանալ անհրաժեշտ իրերը։ Այսպիսով վե-  
րացւում են միջնորդ վաճառականները, ո-  
րոնք աշխատանքի խոշոր տոկոսները լեց-  
նում են իրենց գրապանները։ Թողնելով այն  
բոլոր մանրամասնութիւնները, որ Ֆուրիէն  
տալիս է իր աշխատութեան մէջ, յիշենք  
միայն այն, որ իր վառ երևակայութեան  
շնորհիւ նա իրական աշխարհից ելնում և  
մտնում է ցնորքների ու երազների աշխար-  
հը։ Նրան թուում է, որ Փալանդներ շինելով,

U.S.S.R. PUBLIC LIBRARY  
Tbilisi, Georgia  
7/11/1922

միանգամից կը ջախջախի՝ երկու վայրէն կը ստեղծի նոր ճներգաշնակ կարգեր, ուր մարդկութիւնը կը լինի երջանիկ, ուր աշխատանքը կը ծաղկի և ընդ միշտ կը վերանայ չքաւորութեան ուրեականը: Այդպիսի փալանդներով նա մոռածում է ծածկել նախ ամբողջ Ֆրանսիան, յետոյ ամբողջ Եւրոպան և ապա ամբողջ երկրագունդը: Եւ իր երազները իրականացնելու համար նա դիմում է հարուստների օգնութեանը, նա փորձում է կառավարութեան միջոցով իրականացնել իր նախագիծը, բայց ամեն տեղ հանդիպում է ծաղրի և անտարբերութեան: 1820-ական թւականներին Ֆուրիէի հետեւրդներից մէկը, Բօյէ-Դիւլարի, պարլամենտի պատգամամառ, աշխատում է կազմել ակցիօններական ընկ. 1,200,000 ֆր. դրամակիլով և իրականացնել Ֆուրիէի նախագիծը: Սակայն աշխատանքների կիսում նիւթական միջոցները պակասում են և ֆուրիէրիստները յուսահատւած թողնում են իրենց երազները իրականացնելու նոր փորձերը: Ահա այդպիսի անյաջող վախճան է ունենում վառ երկակայութեամբ, այց անկեղծ համոզւած Ֆուրիէի նախադիմը: Ինչպէս տեսնում էր, Ֆ. քիչ նշանակութիւն էր տալիս հասարակական-տընդհանական կարգերի նօրմալ զարգացումնե-

թին. Նա հեռու էր քաղաքական խնդիրներից. Նա չէր ապացուցանում փաստերով իր սկզբունքները, այլ միայն գոհանում էր գեղցիկ և վառ գոյներով տալ իր երազած ֆալանգների նկարագիրը: Բայց անուրանալի է, որ նա անկեղծօրէն հաւատում էր իր գաւանանքին, որնա մնում էր միշտ բարեկամ բանուրի, խեղճ ու թշւառ աշխատաւորների և ամեն ջանք թափեց թեթևացնելու նրանց վշտերը, բարւոքելու նրանց բարեկցութիւնը: Ահա այն մեծ արժանիքը, որ ունի ֆուրիէն և այն մեծ ծառայութիւնը, որ նա տւելէ մարդկութեանը—քննադատական ոգու արթնացումը:

Ֆուրիէն ունէր բազմաթիւ աշակերտներ: Նրա հետեւորդներից նշանաւոր է Ֆեգերէն, որին ամենայն իրաւամբ պր. Թոթոմեանցը անւանում է «մոռացւած սօցիալիստ»: Ահա թէ Ֆեգերէն իր նշանաւոր աշխատութեան մէջ ինչպէս է գնահատում ընկերակցութիւնների գաղափարը. «Զեղ եմ նւիրում այս գիրը, — դիմում է նա բանւորներին, — որովհետեւ ձեր ընթերցանութեան համար եմ զրել կարգացէք այդ աշխատութիւնը, իբրև խորը համոզւած մարդու աշխատութիւն, որ բանւորական միութիւնները ամենազօրեղ և հաստատ միջոցներ են չքառութիւնը վերացնելու, արդիւնաբե-

ռութեան կարգը աղահովելու, իշխանութիւնը տալու այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք արժանի են, ամեն մէկին վարձատրելու ըստ իր աշխատանքի, բանւորների աշխատանքի արդիւնքը ապահովելու և այդպիսով ժողովրդական մասսան աղատելու կապիտալիստների և ձեռնարկողների շահագործումներից, իրականացնելու աղատութիւնը և հաւատարութիւնը, ճշմարտութեան յաղթանակը իրականացնելու և վերջապէս հաստատելու Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ, որ իւրաքանչիւր սօցիալական բարհնորդուման նպատակն է: Աւելի ևս մեծ հաւատով է վերաբերում Ֆեգերէն գիւղատընտեսական միութիւններին. «... Եթէ բնութեան ներգործութիւնը,— ասում է նա, — աւելի ևս կանոնաւոր և ուժեղ է գիւղատընտեսութեան մէջ, ապա դրանից հետեւում է, որ այնտեղ աշխատանքները աւելի կանոնաւոր են, որ աշխատանքները այնտեղ ուրոշ կարգով են կատարում և կարելի կը լինի նախօրօք որոշել և որ գործազրկութիւնը այնտեղ աւելի քիչ է լինում: Իսկ այս բոլորից հետեւում է, որ գիւղատնտեսական միութիւնները աւելի յաջող կը նթանան, քան թէ ինդուստրիական միութիւնները: Գիւղատնտեսութեան առաւելութիւններից մէկն էլ այն է, որ այնտեղ արտադրութեան

սպառումը և նրանց գները շատ քիչ են տատանւում, քան թէ մշակող արդիւնաբերութեան արտագրութիւնները, Հետեւալէս, եթէ մենք ասում ենք, որ բանտորական միւթիւնների գոյութիւնը հնարաւոր և անհրաժեշտ է արդիւնաբերութեան մէջ, ապա առաւել ևս այդ միութիւնները հարկաւոր են գիւղատնտեսութեան համար»: Այսպիսով Ֆեգերէն ընդունելով բանուորների միութիւնը, աւելի ոգևորւում է գիւղատնտեսական միութիւններով: Ֆեգերէն իր սկզբունքները հիմնում է աւելի իրական հիմքերի վրայ և ոչ մի չափազանցութիւն, ոչ մի երազ կամ անիրականալի ծրագիրներ չէք տեսնիլ ֆեգերէի մօտ, ինչպէս մենք տեսանք Փուրիէի մօտ: Նոյն իսկ այն միջոցները, որ նա առաջարկում է միութիւններ կազմակերպելու դէպքում, ընդունելի և զատ անգամ գործնական միջոցներ են: Այսպէս, օրինակ, գիւղական մանր սեփականաստէրերը կըմիանան և կըկազմեն մի ընկերութիւն: «Այդ ընկերութիւնը հաւասար կերպով կըրաժանի իր անդամների մէջ բոլոր երկրագործական աշխատանքները, Յետոյ նախօրոք պիտի որոշել մարդու և կենդանիների մի օրւայ և կէս օրւայ աշխատանքի արժէքը, օրինակ՝ մի մարդու երկու օրւայ աշխատանքը հաւասար է մէկ սայլի մի օրւայ

գործադրութեանը: Այն ժամանակ դաշտից սայլով խոտ բերող ընկերոջ աշխատանքը երկու օրում՝ հաւասար կը լինի միւս ընկերոջ երեք օրւայ ձեռքի աշխատանքին: Վաստակը (շահը) կը բաժանէի իւրաքանչիւրի աշխատանքի համեմատական չափով, այն ինչ չպիտի հաշւել հիւանդութեան կամ ուրիշ գժբաղդութեան դէպքերը»: Սակայն Ֆեգերէի առաջարկած միութիւնները դեռ ևս անկանոն և սաղմային վիճակի մէջ են. Նա ինքն զգում է, որ իր ծրագիրը լիակատար չէ և այդ պատճառով ցանկութիւն է յայտնում կատարել նախապատրաստական մի շարք փորձեր և յետոյ միայն մշակել վերջնական ծրագիրը Ֆեգերէին մենք նոյնպէս չենք կարող անւանել բանտորական և գիւղական միութիւնների նախաձեռնող. Նա, Ֆուրիէի նման, միայն աւելի իրական հիմունքներով, հանդիսանում է որպէս քարոշիչ ընկերակցական գաղափարի. Նրանց ժողովքի մէջ արթնացնում և զարգացնում են ընկերակցական գաղափարը, իսկ միութիւնների նախաձեռնութիւնը պատկանում է իւնենց՝ բանտորներին, ինչպէս կը տեսնենք յետագայ դէպքերից:

— Այն ժամանակ, երբ Ֆուրիէն Ֆրանսիայում քարոզում էր իր պաշտած գաղափարը, ջանք էր թափում իրականացած

տեսնել ֆալանգների և ֆալատնոերի նախագիծը, ճիշտ այդ ժամանակ մի ուրիշ ուտոպիստ սօցիալիստ Անգլիայում՝ Բօրէըտ Օռվէն (1771—1858) նոյն երազներով տարւած, բայց աւելի իրական հիմքերի վրայ դրւած նախագծերով դրաւել էր հասարակութեան ուշադրութիւնը։ Օռվէնը նոյն պիսի հաւատով վերաբերւում էր այն գաղափարին, որ քարոզում էին ժամանակակից ուտոպիստ սօցիալիստները. նո համոզւած էր, որ ներկայ հասարակութիւնը ամենայն դիւրութեամբ կարող է անարխիական դրութիւնից փոխւել և մտնել սօցիալական հօրմալ կազմի մէջ։ Ճիշտ այնպէս, ինչպէս Ֆուրիէն, նա կարծում էր, թէ կը բաւեր ուսումնասիրեկ մարդկութեան նօրմալ կենցաղի հիմունքները և ահա հասարակութիւնը ոտքի կը կանգնի և կիրականացնի իր փայփայած երազները։ Օռվէնը այնպիսի չափազանցութիւնների մէջ չի մտնում, ինչպէս Ֆուրիէն։ Նա մարդկանց հակումների և բնաւորութիւնների վրայ չի հիմնում իր ապագայ հասարակութիւնը, այլ գասակարգերի տընտեսական յարաբերութիւնների վրայ։ Օռվէնը կարծես թէ աւելի մոտենում է մեր ժամանակակից սօցիալիստներին, մասնաւոր նրա քարոզած ընկերակցութեան և համագործակցութեան գաղափարը ներկաւ

ուում իրականացած հնք տեսնում խոշոր ծաւալով։ Օռվէնը նոյնպէս վաճառականութեամբ է պարապել իր երիտասարդութեան օրերում, սկզբում գործակատարի պաշտօնով կոնդոնում, յետոյ տեղափոխւել է Մանչէստր, ուր ծանօթութիւն է հաստատում տեղական դրականական և փիլիսոփայական ակումբի անդամների հետ։ Այդ ժամանակ Օռվէնը հետաքրքրում էր բանւորական օրէնսդրութեան հարցով և ինքը այդ առթիւ կարգաց մի շարք դասախոսութիւններ վերոյիշեալ ակումբում։ 20 տարեկան հասակում նա դառնում է մանուֆակտուրայի գործարանի կառավարիչ և երկար ժամանակ վարում է այդ պաշտօնը։ Ինքը անձամբ մօտ լինելով բանւորներին, ուսումնասիրելով բանւորների կացութիւնը և ոգկորւած լինելով ժամանակակից սօցիալիստների աղատ մտքերով։ Օռվէնը տեսում մարդկութեան հասարակական յարաբերութիւնների անպէտքութիւնը, և այդտեղ հիմք առան նրա հայեացքները թէ մարդկութեան և թէ հասարակական խնդիրների վրայ։ Իր նախորդների և իր ժամանակակից տնտեսագէտների նման, Օռվէնը սկսեց փնտրել միջոցներ թեթեացնելու բանւորների աշխատանքի լուծը, բարեկաւելու նրանց կենցաղը և ձեռք բերելու դատ օրէնսդրական իրաւունքներ։

Իբրև գործարանատէր, պարզ է, որ Օռվէնը ուրիշ կերպ չէր կարող հասկանալ հասարակական բարենորոգութեամբ իւընդիրը, այլ միայն որպէս բարերար-գործարանատէր: Հէնց այդ հասկացողութեամբ նա սկսեց մի շարք բարենորոգութիւններ մտցնել իր սեփական գործարանում, ձեռք բերեց նորագոյն գործիքներ, որոնք թեթեւացնում են բանւորի աշխատանքը, մշակեց ծրագիր բանւորների կենցաղը բարելաւելու նպատակով և պաշտպան հանդիսացաւ բանւորական օրէնսդրութեան: Այդպիսով նա մշակեց «պատրօնատի» կամ «տիրոջ» սիստեմը, հիմնելով իր անձնական փորձերի վրայ: Նա ասում էր այն, ինչ որ ներկայ սօցիալիստները, որ հէնց գործարանատիրոջ շահի տէսակէտից անհրաժեշտ է լաւ խնամիլ կենդանի մեքենաները, այսինքն բանւորներին, հարկաւոր է նըանց լաւ սնունդ, ապրուստի լաւ պայմաններ տալ, որպէսզի բանւորը աւելի ուժով և էներգիայով աշխատի գործարանատիրոջ համար: Օռվէնը ծանօթ լինելով քիմիայի հետ, ընդունում էր ամբողջ տիեզերքը ուսպէս քիմիական լաբորատորիա, իսկ մարդկանց համարում էր որպէս քիմիական բարդ բաղադրութիւն, որը ազատ կերպով ենթարկւում է արտաքին պայմանների ազդեցութեան, և

հէնց այդ տեսակէտից անհրաժեշտ արտաքին պայմանները և կրթութիւնը բարելաւել, քանի որ, որչափ այդ վերջինները բարձր են, այնչափ մարդը աւելի զարգացած, աւելի կրթւած և աւելի նրբացած ու աղնւացած է: Ուստի ամենից առաջ պիտի փոխել տիրող պայմանները, հասարակական կարգերի և նոյն իսկ անհատականութիւնն ազատ զարգացումը կաշկանդով կապերը ոչնչացնել և յետոյ մարդ անհատը այդ ազատ պայմանների մէջ կարող կը լինի զարգացնել իր ընդունակութիւնները, նրբացնել և աղնւացնել իր ոգին, ուժեղացնել իր ֆիզիքականը: Որչափ Օռվէնը ճիշտ է իր հիմնական դատողութիւնների մէջ, այնչափ նա սխալում է գործադրութեան կամ իրականացման միջոցների մէջ: Հաւատարիմ մնալով իր սկզբունքին, նա հէնց աւաշին փորձերը սկսեց կատարել իր սեփական գործարանում: Միաժամանակ նա ջերմ կերպով պաշտպանում էր բանւորական օրէնսդրութիւնը, դիմելով կառավարութեան աշակեցութեանը և յենելով կալւածատէրերի ազդեցութեան վլայ, նա ամեն կերպ աշխատում էր, որ կառավարութիւնը միջամտի բանւորների և գործարանատէրերի վէճերի մէջ: Երկար փորձերից յետոյ, զուր դիմումներից յետոյ, Օռվէնը որոշեց դիմել արդիւնաբե-

բողներին, աշխատելով մացնել նրանց մէջ արտադրողական ընկերութիւնների գաղափարը: «Այդ ընկերութիւնների նպատակը, — ասում է Օռվէնը, — կայանում է նրանում, որ միութեան և կօօպերացիայի սիստէմի միջնով մինք կապահովինք ընդհանուրի երջանկութիւնը: Այդ միութիւնները հիմնւած կը լինին ընդհանուրութեան սիրոյ և մարդկացին բնութեան ճանաչողութեան վրայ»: Այսպիսով Օռվէնը առաջինն էր, որ քարոզեց կօօպերացիայի գաղափարը արդիւնաբերութեան մէջ. նա առաջինն էր, որ սկսեց այդ ուզութեամբ փորձեր կատարել, թէև այդ փորձերը անյաջողութիւն կրիցին: Նա առաջին սօցիալստ քննադատն է, որ հարւածելով արդիւնաբերութեան ժամանակակից սիստէմը, առաջարկում է նոր հիմքեր, նոր սկզբունքներ. հիմնւած արդարութեան, մարդասիրութեան և հաւասարութեան վրայ:

Ահա թէ ըստ Օռվէնի ինչպիսի սխալ հիմքերի վրայ է գրւած արդի արդիւնաբերութիւնը. «Այդ հիմքերը, — ասում է Օռվէնը, — երեք են. առաջին՝ աշխատանքի մանրամասն (détail) բաշխումը, երկրորդ՝ մըրցումը և երրորդ՝ շահ ստանալու հնարաւորութիւնը, միայն այն ժամանակ, երբ առաջարկը հաւասար է պահանջին կամ անցնում է պահանջից»: Եւ իրապէս բերած հ-

րեք հիմքերը, որոնց վրայ կանգնած է արդի արդիւնաբերութիւնը, ճիշտ են և համապատասխանում են իրականութեանը: Բաւական է մի ակնարկ ձգէք արդի արդիւնաբերութեան կաղմակերպութեան վրայ և կը տեսնէք թէ աշխատանքի անհաւասար բաշխումը ինչպէս այլասեռում է, թուլացնում է մարդկութիւնը: Երկրորդ սխալ հիմքը՝ մըրցութիւնը խոշոր չարիքներից մէկն է. մըրցութեան շնորհիւ գոյութիւն ունի մի մասվերջ կորիւ. նա հանդիսանում է որպէս մի կուր դաշտ, ուր մէկը կուռում է միւսի դէմ, դասակարգը դասակարգի դէմ, ամեն ոք իր ընկերոջ դէմ, համայնքը համայնքի դէմ, աղգութիւնը աղգութեան դէմ: Այդ սիստէմն, այսինքն մըրցութեան սիստէմի տակ հասարակութիւնը ապրում է առանց հասարակական կապերի. այդպիսի հասարակութիւնը աւելի նման է մի կուռզ բանակի, ուր տեսնում ենք վիրաւորներ և սպանւածներ, չբաւորներ և հարուստներ, ծոյլ բայց լաւ սնունդ ստացող պարագախներ և աշխատաւէր՝ բայց միշտ քաղցած բանւորներ: Ահա մըրցութեան սիստէմի տակ գոյութիւն ունեցող հասարակութեան պատկերը:

— Իսկ երրորդ սխալ հիմքը դարձեալ մի խոշոր չարիք է, որ ստեղծել է ժամանակակից արդիւնաբերութեան սխալ սիստէմը:

Նախ քան մեքենաների գիւտը հնարաւոր էր այդպիսի աննօրմալ դրութիւնից մի կերպ խուսափել բայց հէնց որ մեքենաները գտնւեցան և գործադրութեան մէջ լնկան, առաջ եկաւ արտադրութիւնների առաջարկի և պահանջի անհաւասարութիւնը, իսկ գրանից—տնտեսական տագնապները, որոնք մի կողմով աւերում են գործարանատէրեին, միւս կողմից բազմացնում են գործադրութիւնների և քաղցածների թիւը։ Ա. հա այդպիսի սարսափների առաջն առնելու համար, Օուվէնը առաջարկում է արտադրողներին միանալ և կազմել խմբակցութիւններ, համագործակցական ուժերով արտադրել և արտադրածը սպառել իրենց մէջ։ Այսպիսով կօպերացիան միակ փրկարար միջոցն է, որ կարող է վերացնել բանւորի չքաւորութիւնը, արդիւնաբերական, տնտեսական տագնապները։ Նա միակ միջոցն է, որ կարող է մարդկանց տարբեր դասավարգերի մէջ հաշտութիւն և սէր մտցնել։

Օուվէնը փորձեց իրականացած տեսնել իր ծրագիրը և այդ նպատակով նա գնում է Ամերիկայի Խնդիան նահանգում 30 ակր տղատ հող, ուր կազմում է իր երազած դադութը պատահաբար այնտեղ ժղոված մարդկանցից, սակայն այդ փորձը վերջանում է անյաջողութեամբ, տեսնելով որ

միայն արտաքին պայմանները բաւական չեն մարդկանց բնաւորութիւնները յեղաշըրջելու համար։ Այդտեղ նա կորցնում է իր հարստութեան միծ մասը և նորից վերադառնում է Անգլիա, ուր ձեռնարկում է մի նոր փորձ, որը դարձեալ վերջանում է անյաջողութեամբ։ սակայն այդ փորձը ունէր շատ մեծ հասարակական-քաղաքական նշանակութիւն։ Այդ փորձը «Աշխատանքի փոխանակութեան բօրսայի» հիմնելն է։ Օուվէնի նպատակն էր՝ հիմնելով այդ բօրսան ազատել հասարակութիւնը միջնորդ-վաճառականների վաշխառուական ճանկերից։ Նա կամեցաւ այդ բօրսայի միջոցով ուղարկի յարաբերութիւն ստեղծել արտադրողների և սպառողների միջև։ Ամեն մի արտադրող մերում էր իր արտադրութիւնը այդտեղ և նրա փոխարէն ստանում էր աշխատավարձի կուպօն։ Ապրանքների գնահատումը կատարում էր այսպէս։ ամեն մի ապրանքի վրայ գործ դրած մի ժամւայ աշխատանքը գնահատուում էր 6 պէնս։ այդ միջոցը բաղմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք էր տալիս։ Բօրսայից ստացած կուպօնները դրամի արժէքը ունէին և շատ խանութներ ընդունում էին, քանի որ բօրսայի փորձերը աջողութեամբ էին գնում։ Բայց հէնց որ բօրսան լցուեց մնացորդ և անպէտք ապրանքներով,

այն ժամանակ կուպօնները կորցրին իրենց նշանակութիւնը, և քօրսան ոնան կացաւ: Այդպիսի անյաջող վախճան ունեցան մարդասիրութեան գաղափարով լեցւած Օռվէնի փորձերը, և այդ անյաջողութեան գիշաւոր պատճառն այն էր, որ նա աշխատում էր տռանձին անհատների ջանքերով և մի-մի փորձերով կերպարանափոխել ժողովրդական անտեսութիւնը և մարդկանց բնաւորութիւնը. նա ուզում էր ֆուրիէի նման մոգական գաւազանի մի հարւածով յեղաշրջել մարդկութիւնը իր հասարակական կարգերով, իր բնաւորութեամբ և իր հասկացողութիւններով: Որչափ որ Օռվէնի փորձերը անյաջող լինէին, որչափ որ նրա հիմունքը սիսալ լինէր, այնուամենայնիւ անուրանալի է այն խոշոր դեմք, որ նա ունեցաւ Եւրոպայի մտաւոր զարգացման պատմութեան մէջ, անուրանալի է նրա անկիղծ սէրը, որ տածում էր նա զէպի աշխատաւորները, ամեն կերպ աշխատելով իրագործել բանւորական օրէնսդրութիւնը, ջանալով յաջողեցնել պետութեան միջամտութիւնը բանւորների և գործատէրերի վէճերի ժամանակ, անուրանալի է մանաւանդ այն խոշոր ծառայութիւնը, որ նա աշխատեց իրականացնել կօպերացիայի գաղափարը. անուրանալի է նրա հիմնաւոր տեսութիւնը

արդիւնաբերութեան կրիզիսների մասին և վերջապէս նրա կատարած փորձերը իրականացնելու մարդասիրութեան, հաւասարութեան և արդարութեան վսեմ գաղափարը. այդ բոլորը թոյլ են տալիս Օռվէնին համարձակ անւանել կօպերացիայի նախանայր, նրա առաջին և անխոնջ քարոզիչը, որի բարոզների ազգեցութեան տակ առաջ եկաւ մի հզօր կազմակերպութիւն, որի առաջ ուսուափում են կապիտալիստաները, տեսնելով իրենց առաջ մի հզօրագոյն հակառակորդ, մի հակառակորդ, որ կռած և կրփած է աշխատաւորներից, մարդասիրութեան, հաւասարութեան և արդարութեան գաղափարով լեցւած անձնազո՞ն մարտիկներից: «Կօպերացիան կամաւոր սօցիալիզմն է,— ասում է Մեօրփին,— ուր ամեն ոք բերում է իր բաժինը, ուր մրցման սիստէմին փոխարինում է բարի նախանձը, ուր թէ հպարաները և թէ խոնարհները իրար հանդիպում են նոյն պլատֆորմի վրայ և ուր փոխադարձ օգնութեան գաղափարը դառնում է բոլորի համար մի ընդհանուր նպատակ»: Ուրեմն կօպերացիան (որ հայերէն նշանակում է «համագործակցութիւն») մի սիստեմ է, որ ստեղծել է կօպերացիայի նախահայրը՝ Օռվէնը և որը իրականացնել են բանւորները ճքաւորու-

թհւնը և չքաւորութեան հեռանկարը վերացնելու համար իրենց ընտանիքներից։ Միանգամայն գովելի նպատակ է և գործադրուղ միջոցները ազնիւ են։ Սակայն այժմ հարց է ծագում՝ արդեօք կօօպերացիան պիտի ընդունել որպէս նպատակ, թէ որպէս միջոց։ Ոմանց կարծիքով, կօօպերացիան մի որոշ նպատակ է—գնած նիւթերի վրայ օգուտ ստանալ. միւսները պնդում են թէ կօօպերացիան մի միջոց է աշխատավարձը վերացնելու և քիչքիչ ասպարէզից հեռացնելու միջնորդներին, այսինքն վաճառականներին, որհետաւորներին և կապիտալիստներին։

«Սակայն կայ նաև մի երրորդ տեսակէտ, — ասում է Լուի Բերտրան. — այդ այն է, որ կօօպերացիան ընդունում է որպէս մի միջոց չուներ դասակարգը կազմակերպելու համար։ Նա (այսինքն կօօպ.) տնտեսական և առևտրական կրթութեան դպրոց է. նա թոյլ է տալիս աշխատաւորին աւելի լաւ ապրել, աւելի ոյժ ձեռք բերել, աւելի ազատ ժամ ունենալ. աւելի կրթութիւն ստանալ, աղջի մէջ ամեն օր գերակշռող տեղ բռնել և այդպիսով հասնել երկրի իշխանութեանը։ Սօցիալական խոցոր փոփոխութիւնները կատարում են կամ օրէնքաղութեան ուղիով կամ յեղափոխական ձանապարհով։ Ուստի աշխատանքի ներկայա-

ցուցիչ բանւորը նոյնը պիտի անի, ինչ որ 1789-ին աշաւ բուրժօւազիան, ոչ թէ քաշաբային միւս կատեզօրիաներին տիրելու, այլ հասարակական արդարութիւնը վերականգնելու, աշխատանքի հաւասար և արդարացի բաշխումը իրականացնելու։ Ահա կօօպերացիայի նշանակութիւնը։ Նա մի փառաւոր դպրոց է, ուր աշխատաւորը, ուր ժողովրդի չքաւոր դասը միջոց կունենայ կրթելու, դառնալով հասարակութեան հաշմար քաղաքականապէս հասուն անդամ և, որպէս պիտանի ու արտադրող առողջ ոյժ, նա կը բարելաւի իր տնտեսութիւնը, կազնը և բարացնի իր հոգեկան պահանջները և ընդմիշտ կազմաւի տգիտութեան ճիշտաններից։

## II ԴԱՍԱԽՈԾՈՂԻԹԻՒՆ

### ԿՕՊԵՐԱՑԻԱՅԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՒՄԸ ՏԸՆԿԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՅՈՒՂԱՑՈՒՄԸ

(Ստատիստիկական տեղեկութիւններով)

Կօօպերացիայի շարժումը արեմտեան եւրոպայում սկսել է իրապէս տասնկիններորդ դարու սկզբին, թէև նրանից առաջեղել են մի-մի փորձեր, սակայն այդ փոր-

ձերը, ինչպէս նաև ֆուրիէի և Օռւլէնի փորձերը, անյաջող վախճան ունեցան: 1844 թւին Բօշդէլի (Անգլիա) բանւորները սկիզբը դրին Բօշդէլի սպասողական կօպերատիւ միութեան, որը իր փայլուն գործունէութեամբ, իր կապիտալով և անդամների թւով համարւում է երկրագնդիս մէջ առաջին ընկերութիւնը: Նախ քան այս ընկերութեան՝ որպէս կազմակերպութեան և նրա հիմունքների մասին խօսելը, անհրաժես է մի երկու խօսք ասել թէ սօցիալիստները ինչպիսի վերաբերմունք են ցոյց տալիս կօպերացիայի շարժմանը:

Ուտօպիստ սօցիալիստները կօպերացիայի նշանակութիւնը այնչափ չափազանցրին, որ ընկան նոյնիսկ ֆանտազիաների աշխարհը: Նրանք ենթադրում էին, որ կօպերացիան կարող է մարդկութիւնը միանգամբ ազատել իր կաշկանդող և ճնշող ճիրաններից, այն է թշւառութիւնից և չքառորդութիւնից: Նրանց թւում էր թէ կօպերացիայի տարածումով երկրագնդիս վրայ վերջնականապէս կը հաստատէի հաւասարութեան, մարդասիրութեան և արդարութեան թագաւորութիւնը. թւում էր թէ միայն կօպերացիան կարող է անել այդ համաշխարհային էվոլյուցիան, և ահա ընդունելով կօպ. որպէս նպատակ, նրանք ջանք թա-

փեցին իրականացնելու այդ մեծ գաղափարը, հիմնելով սպառողական և արտադրողական կօպ. ընկերութիւններ: Նրանց կարծիքով, կօպերատիւ ընկերութիւնները պիտի կենտրոնացնեն իրենց ձեռքում բոլոր կապիտալը, այն ժամանակ կը գնեն կալածատէրերի բոլոր հողերը, կը հիմնեն ամեն տեղ գաղութներ, համայնական միջոցներով կը կատարեն արտադրութիւնները և այդպիսով մարդկութիւնը կազմատեն ժամանակակից բոլոր չարիքներից՝ շահագործումից, չքառորդութիւնից և անհաւասարութիւնից: Պիտի նկատել որ մեր օրերում կան այնպիսի կօպերացիաներ, որոնք հետու չեն գնում ուտօպիստ սօցիալիստներից. նրանք նոյն հաւատքը ունին կօպերացիայի ոյժի վրայ: Տեսանք, որ ուտօպիստների հէնց այդ չափազնցութիւնը մասսամբ պատճառ եղաւ, որ կօպերացիայի իրականացումը անյաջող վախճան ունիցաւ:

Իսկ թէ ինչպիսի վերաբերմունք են ցոյց տալիս մեր ժամանակակից սօցիալիստ կուսակցութիւնները կօպերացիայի շարժան, այդ երեսում է նրանց պաշտօնական օրգաններում, կուսակցական համագումարներում և կուսակցութեան ղեկավարների արտայայտած կարծիքներից: Համարեա թէ բոլոր սօցիալիստ կուսակցութիւնները ընդու-

նում են կօօպերացիան և աշխատում են իրաւկանացնել իրենց շըջաններում։ Նոյն իսկ բելգիական սօցիալիստ կուսակցութիւնը այնչափ սերտ կապով միացրել է կօօպերացիայի գաղափարը սօցիալիզմի հետ, որ իր կանոնադրութեան մէջ յայտաբարում է՝ «ով ուղում է դառնալ սօցիալիստ կօօպերատիւ միութիւնների անդամ, նա անկառած պիտի ընդունի մեր կուսակցութեան դաւանանքը, այսինքն սօցիալիզմը, իսկ ով սօցիալիստ է, նա պիտի ընդունի նաև կօօպերացիայի գաղափարը»։ Այս սերտ կապակցութեան շնորհիւ, Բելգիայի սօցիալիստները տարէ ցտարի ստուարացնում են իրենց շարքերը գիւղական աշխատաւորներով և միացած ուժերով կուսում են կաթօլիկ և այլ րէակցիօն ուժերի դէմ։ Աւելորդ ենք համարում երկար կանգ առնել այդ հարցի վրայ և ցոյց տալ թէ իւրաքանչիւր երկրի սօցիալիստ կուսակցութիւնները ինչպէս են վերաբերում կօօպերացիայի գաղափարին։ ասենք միայն այսչափը, որ իտալիայի սօցիալ-դէմօկրատները առաջին եղան, որոնք ընդունեցին կօօպերացիան և իրենց կանոնադրութեան մէջ մտցրին նաև գիւղական կօօպերատիւ միութիւնների գործունէութիւնը։ Իսկ Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատները ամենավերջինը կըլինեն, որոնք կընդունեն

կօօպերացիան, թէև նրանց ղեկավարներից միքանիսը համակրանքով են վերաբերում, այն էլ քաղաքային կօօպերատիւ միութիւնների գործունէութեանը։ Մինչդեռ սօցիալիստական գաղափարը տարածելու համար ամենալաւ միջոցը կօօպերացիան է, նա մի դպրոց է, ուր պատրաստում են քաղաքականապէս հասուն հասարակութեան անդամներ, որոնք աւելի գիւղութեամբ և գիտակցօրէն Վըմբռնեն սօցիալիստական հզօր գաղափարները։ Ահաւասիկ հէնց յանուն սօցիալիզմի ըլ պիտի մոռանալ և աչքաթող անել գիւղական մասսան, ամեն կերպ պիտի աշխատել բարձրացնել նրա անտեսութիւնը և հետևապէս նրա մտաւոր մակերեսոյթը։ Խաւարամիտ և յետաղէմ հոսանքների առաջն առնելու համար, միակ և ապահով միջոցը գիւղական կօօպերատիւ միութիւններ կազմակերպեն է. Բելգիայի սօցիալիստների գործունէութիւնը դրա պարզ ապացոյցն է։ Նոյն պիրճական ապացոյցներն են տալիս նաև միւս երկրների սօցիալիստների գործունէութիւնը այդ ասպարիզում։

Կօօպերացիաների միջազգային համագումարները գալիս են միանգամ և աստատելու թէ որպիսի ոյժ է ներկայացնում կօօպերացիան արևմտեան եւրոպայում և թէ ինչպիսի սարսափով են նայում կապի-

տալիստները այդ շարժման վրայ, մի շարժում՝ որ օրըստօրէ զրաւում է նոր երկիրներ, օրըստօրէ ստուարացնում է իր շարքերը և ամենուրեք տարածում է մտրդասիրութեան, հաւասարութեան և արդարութեան գաղափարները:

Աւելի ևս ապշեցուցիչ է այն փաստը, որ համարեա թէ բոլոր կօօպերատիւ միութիւնները ունեցել են համեստ ծագում: Մի քանի համոզւածների և համակրողների մի փոքրիկ խումբ, փոքրիկ դրամագլխով, երբեմն ոչ աւել 50—100 բուրլուց, մի անշուր խանութ, մի քանի կտոր ապրանք և ահա հիմք է գրւում այնպիսի փառահեղ ու փայլուն ընկերութեան, որի տարիկան շրջանառութիւնը այսօր հասնում է մի քանի միլիոն բուրլու: Այդպիսի համեստ սկզբնաւորութիւն է ունեցել Անգլիայի Ռօչդէլ քաղաքի սպառողական կօօպերատիւ միութիւնը: Իրենց հիմնադրութեան օրից թէ Ռօչդէլի և թէ ուրիշ կօօպերատիւ ընկերութիւնները շարունակ առաջադիմող քայլերով են ընթացել: Եւ այդ յառաջադիմութիւնն ու յաջողութիւնը ոչ թէ ժամանակաւոր մի բան է, կատարւել է ոչ թէ արտաքին կամ ներքին հովերի տակ, այլ դա եղել է հաստատ և խելացի հիմքերի վրայ կառացուցած մի գործ, որի յաջողութիւնը հետեւապէս կաս-

կածելի չը պիտի լինի. այդ յաջողութիւնը սերտ կերպով կապ ունի ժամանակակից կեանքի զարգացման հետ: Կօօպերատիւ ընկերութիւնների ազգեցութիւնը հասարակական, այլև քաղաքական կեանքի ընթացքի վրայ նկատիլի է ոչ միայն Անգլիայում, ուր նա ծնունդ և կենսունակութիւն է առել, այլ և մայր ցամաքում և նոր աշխարհում: Անգլիական տիպի կօօպերատիւ ընկերութիւնները այն առաւելութիւններն ունին, որ ներկայացնում են տեխնիկական որոշ սկզբունքներ, որոնք անհրաժեշտ են ներկայ հասարակական կարգերի տակ զարգացնելու կօօպերացիայի գաղափարը: Մենք չենք ասում, թէ անգլիական կօօպ. սիստէմը սպակասութիւններ չունի, բայց նա ունի գործնական հիմնանքներ, որոնք անհրաժեշտ են գործի յաջողութեան տեսակէտից: Այժմ տեսնենք որոնք են Ռօչդէլեան սկզբունքները:

Ասացինք, որ 1844 թւին Անգլիայի Ռօչդէլ քաղաքում մի քանի ոստայնակրանուրներ հիմք դրին մի նոր տիպի սպական ընկերութեան, որը տարբերուում էր հիմնովին նախընթաց ընկերութիւններից: Նրանք հիմնեցին մի այնպիսի ընկերութիւն, որը մատչելի է բոլորի համար, որի անդամ կարող էին դառնալ ոչ միայն ուներները,

այլ և չքաւոր և չունեոր զասը, Իսկ՝ որ  
ամենագլխաւորն է, նրանք ձգառում էին ըն-  
կերութեան և նրա անդամների մէջ ընական  
կապ հաստատել. անկասկած այդ կապից  
կախւած էր ընկերութեան յաջողութիւնը և  
յարատեռութիւնը: Եւ այդ նպատակով ահա  
թէ նրանք ինչ արին. որոշեցին ընկերութեան  
աշխատանքը, զուտ արդիւնքը բաժանել ըն-  
կերութեան անդամների մէջ ոչ թէ  
իրենց բաժնէթղթերի համեմատ, այլ ան-  
դամների տարեկան գնած ապրանքների գու-  
մարի համեմատ: Այսպիսով ընկերութեան  
անդամներից նաև որ ունի մի քանի բաժնէ-  
թուղթ շնորհիւ իր ապահով զրութեան, իսկ  
մէկ ուրիշը ունի միայն մի բաժնէթուղթ և  
եթէ այս փերջինս տարւայ ընթացքում ա-  
ւելի մեծ քանակութեամբ ապրանք է գնում,  
աւելի շատ է սպառում քան թէ առաջինը,  
ուստի և փերջինը աւելի շատ տոկոս կըստա-  
նայ զուտ արդիւնքից քան թէ առաջինը:  
Ուրեմն արդիւնքի բաշխումը ուղիղ յարա-  
բերական է սպառած ապրանքի քանակին: Այդ  
ձևով ընկերութեան անդամներին աւե-  
լի ես շահագրգուռմ են և նրանք իրենց բո-  
լոր առնելիքները կատարում են ընկերու-  
թեան խանութից, նկատի առնելով թէ ի-  
րենց ի թէ ընկերութեան շահերը: Անգլիական  
սպառողական ընկերութիւններից շատերը

զործագրում են այս սիստէմը, այսինքն  
իօնէկեան սիստէմը, որի հիմնական կէ-  
տերն են՝

1) Ընկերութեան զուտ արդիւնքը բա-  
ժանուում է ոչ թէ բաժնէթղթերի քանակու-  
թեամբ, այլ յաճախորդների սպառած գու-  
մարի քանակութեամբ: Բայց նախ քան բա-  
ժանելը արդիւնքից մի որոշ տոկոս յաս-  
կացւում է պահեստի զբաժաղվին, այնու-  
հետեւ հանում են վարչութեան ծախքերը,  
ծառայողների սոճիները և որոշ գումար  
յատկացւում է բարեկործական կամ կրթա-  
կան նպատակների համար:

2) Առևտուրը կատարեաւմ է կանխիկ:  
Ոչ մի դէպքում ապառիկ չի կարելի վա-  
ճառել:

3) Ապրանքները վաճառել տեղական  
շուկայի գնով և ոչ թէ արժեքի գնով:

4) Ապրանքները վաճառել ոչ միայն  
ընկերութեան անդամներին, այլ և ոչ ան-  
դամներին:

5) Բաժնէթղթերի արժեքը իջեցնել  
մինիմումի, որպէսզի հասարակութեան չքա-  
ռոր խաւերը հնարաւորութիւն ունենան ըն-  
կերութեան անդամ լինել: Բացառիկ դէպքե-  
րում բաժնէթղթերի վարը կարելի է յետա-  
ձգել որոշ ժամանակով:

6) Իւրաքանչիւր անդամի համար բաժ-

նէթեթերի քանակը սահմանափակ է:

7) Ընկերութեան բոլոր անդամները հաւասար իրաւունքներ ունեն, և ընկերութեան գործերի մէջ իւրաքանչիւր անդամը մի ձայն ունի:

Ահա բօչէլեան սիստէմի հիմնական կէտերը, որոնց վրայ կառուցած շէնքը ոչ միայն պահպանել է իր գորութիւնը մինչեւ այսօր, այլ և ձիւղաւորւել է ամբողջ Անդշխայում և նրա նմանութեամբ մայր ցամաքում ևս հիմնել և բազմացել են սպառական ընկերութիւնները:

Ընկերութեան անդս մների թիւը առաջին տարին 40 էր 280 բուրլի դրամագլխով, իսկ վեց տարի յետոյ, 1850 թւին, անդամների թիւը հասաւ 300-ի 22,900 բուրլի դրամագլխով: Այսուհետեւ Բօչէլի ընկերութիւնը, որ սկզբում ծաղրի և արհամարհանքի էր արժանացել, հսկայական բայլերով յառաջադիմում է և այսօր բացի կենտրոնական խանութներից ունի 24 հատ բաժանմունք նոյն Բօչէլում: Նրանք ունեն իրենց սեփական ապահովագրական ընկերութիւնը կրակից և դժբախտ դէպքերից ապահովագրելու համար, ունեն հիւանդանոցի և թաղման ծէսի սնդուկներ: Բացի դրանից, նրանք իրենց միջոցներով նպաստում են նաև կրթական գործին. այսպէս

ունեն սեփական դպրոց, ուր ուսանում են մօտ 450 հոգի, ունեն գրադարան 17,318 հատոր գրքերով, մի քանի ընթերցարաններ և այլն, և այլն:

Այդ ընկերութեան օրինակին հետեւում են և հիմնւում են բաղմաթիւ ընկերութիւններ, որոնց թիւը օրըստօրէ աճում է, և այսօր անգլիական կօսպերատիւ ընկերութիւնները իրենց կապիտալի և անդամների քանակութեամբ առաջին տեղն են բոնում:

Ցոյց տալու համար թէ որպիսի հոկայական քայլերով յառաջադիմել են անգլիական կօսպերատիւ ընկերութիւնները, ըերեսը հետեւեալ ստատիստիկան\*).

|       |                       |                 |
|-------|-----------------------|-----------------|
| Տարի. | Ընկերութիւնների թիւը. | Անդամների թիւը. |
| 1850  | 200                   | —               |
| 1878  | ?                     | 521,000         |
| 1889  | 1,500                 | 961,000         |
| 1894  | 1,674                 | 1,343,518       |
| 1895  | 1,711                 | 1,414,159       |
| 1897  | 1,845                 | 1,591,459       |
| 1900  | 1,634                 | 1,727,653       |
| 1903  | 1,614                 | 2,259,000       |
| 1905  | 1,701                 | 4,116,127       |

Ահա ձեզ պերճախօս թւեր, որոնք ապացոյց են թէ որպիսի կայուն և խելացի-

\* ) Озеровъ. О-во Потребителей.

Նիմքերի վրայ են դրւած անգլիական կօ-  
օպերատիւ ընկերութիւնները։ Աւելի պեր-  
ճախօս են առևտրական շրջանառութեան  
թւերը։

| Տարի. | Բաժ. | Վրամագլուխ. | Վաճառք.   | Շահ.     |
|-------|------|-------------|-----------|----------|
| 1878  | 56   | միլ. ր.     | 147 մ. ր. | 16 մ. ր. |
| 1889  | 117  | »           | 260 »     | 34 »     |
| 1894  | 150  | »           | 499 »     | 49 »     |
| 1895  | 161  | »           | 525 »     | 53 »     |
| 1897  | 186  | »           | 622 »     | 67 »     |
| 1900  | 231  | »           | 762 »     | 85 »     |
| 1905  | 290  | »           | 1,000 »   | 100 »    |

Այսպիսով 1905 թւին եղել 4 է միլիոն  
անդամ, 290 միլիոն վրամագլուխ։ Դա նշա-  
նակում է, որ Անգլիայի իւրաքանչիւր 10  
ընտանիքից մէկը կօպերատիւ ընկերու-  
թիւնների անդամ է կամ 10,000 մարդու  
վրայ գալիս է մի կօպ. ընկերութիւն։  
Այսքանը բաւական է ցոյց տալու համար,  
թէ կօպերացիայի շարժումը Անգլիայում  
ինչպիսի հսկայական չափեր է առել. այդ  
պերճախօս թւերը ցոյց են տալիս կօպե-  
րացիայի ոյժը, իսկ թէ այդ ոյժը ինչպիսի  
ազդեցութիւն ունի Անգլիայի ներքին քա-  
ղաքականութեան վրայ կամ թէ այդ ոյժի  
ներքին կաղմակերպութիւնը ինչպէս է, այդ  
բոլորը մենք կը տեսնենք մեր հետեւալ

դասախոսութեան մէջ, երբ կը խօսինք կօ-  
օպերատիւ ընկերութիւնների տեսակների և  
նրանց ներքին կազմակերպութեան մասին։

Այժմ անցնենք կօպերացիայի երկ-  
րորդ հարենիքը՝ ֆրանսիա, ուր առա-  
ջին կօպերատիւ ընկերութիւնը հիմնել է  
1831-ին «L' Européen» անունով։ Բնորոշը  
այն է, որ ֆրանսիացի բանւորները աւելի  
մեծ հակում են ցոյց տալիս գէպի արտադրո-  
ղական ընկերութիւնները քան թէ սպառո-  
ղական կամ մասն գարկային ընկերութիւն-  
ները, վառ ցոյսերով նրանք հիմնում են այդ-  
պիսի ընկերութիւններ, որոնց թիւը գեռես  
1861 թւականին հասնում էր 93 արտ. ընկ։  
Խոկ սպառողական ընկերութիւնները սկիզբ  
են առել գործարաններին կից բացւած խա-  
նութներից, որոնք ապառիկ ապրանք էին  
տալիս բանւորներին մինչև նրանց աշխա-  
տավարձի ստանալը. շատ անդամ այդպիսի  
գործարանական խանութներ հիմնում էին  
իրենք գործարանատէրերը և այդպիսով  
օգտում էին նաև այդ միջոցով։ Ահա այդ  
հանգամանքը դրդեց բանւորներին միանալ  
և կազմել սպառողական ընկերութիւններ  
կօպերատիւ սկզբունքով։ Այս ընկերու-  
թիւնները դժբախտաբար այնպիսի հսկայա-  
կան քայլերով չեն զարգանում, ինչպէս Ան-  
գլիայում։ Այդ դանդաղութիւնը ունի իր-

մասնաւոր պատճառները. — մասսամբ օրէնսդրութիւն բացակայութիւնը կօօպերատիւ ընկերութիւնների վերաբերմամբ, մասսամբ էլ նրանց ներքին կաղմակերպութիւնների սխալ հիմունքները, որոնց հետ մօտից կը ծանօթանանք հետևեալ անգամ, երբ կը խօսենք արտ., սպառ. և վարկային ընկերութիւնների մասին:

Այժմ գաղափար կազմելու համար թէ ինչպիսի յառաջադիմութիւն է արել կօօպերացիան Թրանսիայում, բերինք 1905 թւի վերջին ստատիստիկական թւերը.

|             |              |                                  |
|-------------|--------------|----------------------------------|
| <i>կար</i>  | <i>338</i>   | <i>արոտագրողական ընկերութ.</i>   |
|             | <i>1,994</i> | <i>սպառողական</i> »              |
| <i>թշն</i>  | <i>985</i>   | <i>վարկային</i> »                |
|             | <i>3,553</i> | <i>գիւղ. զանազան տեսակի ընկ.</i> |
| <i>1905</i> | <i>3,290</i> | <i>» սինդիկ. միութիւն</i>        |
|             | <i>60</i>    | <i>շինարական ընկ.</i>            |

*Ընդ.* *10,220.*

Սրանց վրայ եթէ աւելացնենք նաև ապահովագրական ընկերութիւնները, որոնց միայն մի մասը կօօպերատիւ հիմունքներով է կաղմած, ապա կըստանանք մօտ 12,000 ընկ.: Ներկայումս Փրանսիայում բազմացել են գիւղական միութիւնները ամեն տեսակի՝ այսպէս, օրինակ, դինեղործների միութիւն-

ները կազմակերպւել են կրիզիսից յետոյց Այնուհետև հիմնւել են մի շարք արտադրողական և վարկային ընկերութիւններ, այնպէս որ ներկայումս կօօպերատիւ ընկերութիւնների թիւը անցնում է 17,000-ից մօտ 700,000 անդամներով:

Այս է կօօպերացիայի դրութիւնը ֆրանսիայում: Այժմ անցնենք նրա հարեւան երկիրը — Գիւրմանիա, որին կարելի է անւանել փոխագարձ վարկի ընկերութեան ծննդավայր: Թէև այստեղ զարգացել են նաև միւս տեսակի կօօպերատիւ ընկերութիւնները, սակայն վարկային ընկերութիւնները գերակշռող են թէ ընկերութիւնների և թէ անդամների թւով: Բոլոր տեսակի կօօպերատիւ ընկերութիւնների թիւը 1906 թւի ստատիստիկայով հասնում է 22,131-ի, որից՝

Վարկային ընկերութիւններ . . . . . 15,108

Ապրանքներ գնող ընկ. . . . . 6,586

Սպառողական ընկ. . . . . 2,658

Զանազան տեսակի ընկ. . . . . 300

Այս թւերից պարզ երկում է, որ վարկային ընկերութիւնները այստեղ անհամատ աւելի բազմաթիւ են քան ուրիշ երկիրներում: Իսկ սպառողական ընկերութիւնները թէև քանակով չեն բազմանում, բայց անդամների թւով շարունակ աճում են: Այսպէս 1906 թւի ստատիստիկայով կային՝

|                   |           |                 |
|-------------------|-----------|-----------------|
| Վարկային ընկ:     | 2,018,821 | անդամ           |
| Ապրանքային ընկ:   | 486,957   | »               |
| Սպառողական ընկ.   | 1,028,149 | »               |
| Զանագան տես. ընկ. | 34,772    | »               |
| Ընդամենը          |           | 3,658,437 անդամ |

Այս պերճախօռ թւանշանները ցոյց են տալիս, թէ ինչպիսի փայլուն նւաճութներ է անում կօօպերացիան և այդ նւաճութները տարածւում են ոչ միայն քաղաքներում, բանտորական շրջաններում, այլ և գիւղերը. նոյն իսկ ամենախուլ գիւղերում դուք կը գտնէք փոխադարձ վարկի ընկերութիւն կամ ինայողական փոխատու սնդուկներ մի քանի հարիւր անդամներով: Գիւղական կօօպերատիւ միութիւնները նոյն ծաղկեալ վիճակի մէջ են այսուհետ, ինչպէս որ քաղաքային ընկերութիւնները. գեռ ևս 1906 թւին պիտական միութիւնների թիւը հասնում էր 20,128-ի 1,750,000 անդամներով: Կօօպերատիւ ընկերութիւնների թիւը օրըստօքէ աճում է թէ քաղաքներում և թէ գիւղերում. այդ արդէն մի պարզ ապացոյց է թէ ժողովուրդը ըմբռնել է նրա բարերար նշանակութիւնը և ամեն կերպ աջակցում է ընկերութիւններին աւելի լայն խաւեր, աւելի մեծ թուզ անդամներ ձեռք բերելու: Երեք խոշոր պետութիւնների ընդուած

համառօտ ստատիստիկան ցայտուն կերպով տալիս է կօօպերացիայի պատկերը և գույնիս է մի անգամ ևս ապացուցանելու, որ կօօպերացիայի շարժումը խոշոր նւաճումներ է արել արեմտեան Եւրոպայում: Նա իր նւաճումները տարածել է նոյն իսկ այնպիսի փոքրիկ երկիրներ, ինչպէս Սերբիան, ուր գլխաւորապէս զարգացել են գիւղական կօօպերատիւ ընկերութիւնները, որոնց թիւը հասնում է 903-ի 40,000 անդամներով: Արժանի է յիշատակութեան նաև փոքրիկ Զւյցերիան, ուր կօօպերատիւ ընկերութիւնների թիւը հասնում է 295-ի 185,281 անդամներով. Իթէ հաշեի առնենք անդամների ընտանիքը, ապա կը նշանակի որ ապարնակութեան  $\frac{1}{4}$ -ից աւելին կօօպերատիւ ընկերութիւնների անդամներ են: Կօօպերացիայի նոյն փայլուն վիճակը մենք տեսնում ենք նաև Բելգիա, Շվեյցարիա, Դանեմարքա, Հոլլանդիա, Ֆինլանդիա և նոյն իսկ փոքրիկ վիւքսեմբուրգ: Մի խօսքով՝ կօօպերացիան իր ցանցերը տարածել է ոչ միայն ամբողջ Եւրոպայի վրայ, այլ և հեռաւոր Արևելքի վրայ. Եապէնայում արդէն վաղուց գոյութիւն ունին կօօպերատիւ ընկերութիւններ, և այդ քաղաքաւորը սիրւած է ժողովրդի կողմէց:

Կօօպերացիան ամենից շատ նւաճում՝

Ներաբել է գիւղերում, և դա ունի իր պատճառները։ Նախ գիւղական կօօպերատիւթիւնները կազմակերպելը շատ դիւրին է. դրա համար չի պահանջում խոշոր կապիտալ, ինչպէս որ քաղաքային ընկերութիւնների համար, և երկրորդ՝ գիւղական մասսաների դժգոհութիւնը ծածկելու և նրանց քայլաւած տնտեսութիւնը վերականգնելու համար յաճախ կառավարութիւնները իրենք հովանաւորում են և աջակցում գիւղական ընկերութիւնների զարգացման, ինչպէս օրինակ մասնր վարկի և այլն։ Այսպէս թէ այնպէս, կօօպերացիայի տւած օգուտները, մանաւանդ գիւղացիներին, անուրանալի է և որ ամենապլիսաւորն է՝ ինչպէս ասում է իտալացի սօցիալիստ Գայդին, «կօօպերացիան մի փառահեղ շէնք է սօցիալիստական գաղափարները տարածելու գիւղերում, մանաւանդ երբ բացակայում են մտաւոր զարգացումը կամ կապիտալիզմը»։ Մենք էլ կ'աւելացնենք նաև այն, որ կօօպերացիան յեղափոխում է փոխանակութեան սիստէմը և դրանով մի խոշոր բայլ է անում տնտեսական զարգացման մէջ, վերացնելով տղրուկ միջնորդներին։

### III ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

**ՍՊԱՌՈՂԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ Եհ  
ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

(Կօօպ. ընկ. տեսակները եւ նրանց ներքին կազմակերպութիւնը)

Կօօպերացիան — համագործակցութիւնը մենք տեսնում ենք մեր առօրեայ կեանքում ամեն անգամ, երբ որևէ աշխատանք կատարում է երկու կամ աւելի մարդկանց կողմից։ Այդ տեսակէտից կօօպերացիան լինում է երկու տեսակ. 1) պարզ և 2) բարդ։ Պարզ տեսակի կօօպերացիան կոչում է այն աշխատակցութիւնը, որ կատարում են տարբեր մարդիկ միևնոյն աշխատանքը միասին. այսպէս, օրինակ, երբ մի քանի հոգի բարձրացնում են որևէ ծանրութիւն, երբ մի քանի գիւղացի միասին հնձում են արտը կամ կատարում են որևէ գիւղական աշխատանք, մի խօսքով՝ ուր աշխատաւորները տարբեր արհեստի մարդիկ կարող են լինել, սակայն կատարած աշխատանքը կամ աշխատակայի նպատակը նոյնն է բոլորի համար, ահա այս գէպքում համագործակցութիւնը կը լինի պարզ տեսակի։ Իսկ եթէ մի խումբ

մարդիկ կատարում են տարբեր տեսակի աշխատանքներ իրար օգնելով, օրինակ՝ վերցնենք ժամագործի խոշոր արհետանոցը կամ գործարանը, ուր մի քանի հոգի պատրաստում են ժամացոյցի անիները, միւս խումբը պատրաստում է ձգալարը, մի այլ խումբ պատրաստում է ժամացոյցի այլ ժամերը և այլն, կամ վերցնենք, օրինակ, ծխախոտի գործարանը, որը շատերին ծանօթ է, մի քանի բանւորներ կարտում են թութունը, մի քանիսը լցնում են ծխախոտի գիլզիները, մի քանիսը արկղիկների մէջ դասաւորում են, մի ուրիշ խումբ կպցնում է բանդըրուլ և այլն և այլն, մի խօսքով՝ երբ տեղի է ունենում աշխատանքի բաժանումը, ապա այդպիսի համագործակցութիւնը կոչում է բարդ, բարդ կօօպերացիայի գեղեցիկ օրինակ մեզ տալիս է բերդան հրացանի պատրաստութիւնը, ուր 963 մամնագէտ բանւորներից ամեն մէկը շինում է հրացանի առանձին մասերը: Բարդ համագործակցութիւն մենք տեսնում ենք նաև այն դէպքում, երբ մի խումբ աշխատաւորներ կամ անհատ աշխատաւորը իր երկրում արտադրում է որոշ նիւթ, որ յետոյ նա փոխանակում է ուրիշ խումբ աշխատաւորների կատարած արտադրութիւնների հետ, այսինքն երբ առ ունենում պարապմունքների բաժանու-

մբ: Այսպիսով տեսնում ենք, որ անտեսական կեանքում մարդիկ կարող են միանալ և համայնական ուժերով կատարել որևէ աշխատանք, կամ նրանք կարող են դարձեալ միանալ սպառելու նպատակով, վերջապէս նրանք կարող են միանալ և անել թէ մէկը և թէ միւսը, այսինքն թէ արտադրել և թէ սպառել: Տեսանքնակ, որ այդ համագործակցութիւնը կատարելուում է կամ պարզ եղանակով (տուն շինել, ծանրութիւն կըել և այլն) կամ բարդ եղանակով: Այժմ տեսնենք թէ համագործակցութիւնը թէ մէկ և թէ միւս եղանակով ինչպիսի օգուտներ կարող է տալ: Ահաւասիկ այդ օգուտները, 1) համագործակցութիւնը արտադրութիւնների մէջ, փոխադարձ մքցումի կամ բարի նախանձի շնորհիւ, աւելացնում է մասնակցողների աշխատանքի բեղունութիւնը (լարւածութիւնը), այսպէս օրինակ 5 բանւորներ միասին նոյն աշխատանքը կատարելով 10 ժամում աւելի շատ գործ կը շինեն քան թէ մի բանւորը միայնակ 50 ժամում: 2) Համագործակցութեան շնորհիւ հնարաւոր է լինում կատարել այնպիսի աշխատանքներ, որ մարդ միայնակ անկարող է անել, կամ իւ ուժեւից վեր է (օր. տուն շինելլ), ծանրութիւն տանելը), կամ պահանջում է մարդու կեանդից աւելի շատ ժամանակ (օրինակ գետերի

Ջրանցքներ շինելը, ճահիճների չորացնելը, սրանք այնպիսի աշխատանքներ են, որոնց վրայ աշխատում են սերունդներ): 3) Համագործակցութիւնը անհրաժեշտ է նաև այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են որոշ ժամանակամիջոց, որի ընթացքում պիտի կատարելի աշխատանքը. այսպէս օրինակ հունձը, որ եթէ իր ժամանակին չը հնձէք, ձեր ամբողջ արդիւնքը կը վնասուի, իսկ այդ աշխատանքը կատարելու համար մարդ մենակ իր ուժերով անկարող է, հետևապէս համագործակցութիւնը այս դէպում անհրաժեշտութիւն է; 4) Կան այնպիսի գէպեր, ուր համագործակցութիւնը բաւականաշափ կրճատում է աշխատանքը, այսպէս օրինակ հաց թխելը. եթէ ամեն մի մարդու համար առանձին-առանձին հաց թխենք, ապա ստիպւած կլինենք մի քանի անգամ խմոր անել, մի քանի անգամ փուռը տաքացնել, մի քանի որ պահանջումէ անհամեմատ աւելի շատ աշխատանք. իսկ եթէ միանգամից մեծ քանակութեամբ հաց թխենք, ապա աշխատանքը կրճատում է, իսկ այդ գէպերում համագործակցութիւնը անհրաժեշտութիւն է; 5) Համագործակցութիւնը ունի նաև մի խոշոր առաւելութիւն. այդ այն է, որ նրա անդամները զատ-զատ կարող են ոչ մի վարկ ընդունակութիւն (кредитоспособность)

չհնահնալ, իսկ միանալով և ընկերակցութիւն կազմելով նրանք ձեռք են բերում որոշ վարկ և նոյն իսկ որոշ արտօնութիւններ, ինչպէս օրինակ գեւղական մանր վարկի միութիւնները պետական բանկից ստանում են փոխառութիւն ընդամենը 6%/<sub>0</sub>-ով և առաջին չորս տարին բանկը ոչինչ չի ստանում պարտքը շինուու համար (պօրաշենէ), իսկ այդպիսի արտօնութիւն ոչ մի հաստատութիւն չի վայելում. այս արդէն մի խոշոր օգուտ է թէ ընկերութեան գոյութիւնը պահպանելու և թէ անդամներէն փրկելու վաշխառուի հանկերից; 6) Համագործակցութեան մասնակից անդամներին հնարաւորութիւն է տրում օգտական փորձւած մարդկանց ղեկավարութիւնից, այսինքն գործի գլուխ կանգնելով փորձւած մարդ՝ նա ընկերութեան անդամներին տալիս է փորձւած խորհուրդներ, որով նպաստում է աշխատանքի խաղաղ և կանոնաւոր յառաջադիմութեանը և որ ամենագլխաւորն է՝ 7) արտադրող անձատ ուժերը միացնելով մենք կը մեռցնենք մրցումը, մի սիստէմ՝ որի տակ զարգանուում էն ամեն տեսակ չարիքներ և հասարակութիւնը ապրում է առանց հասարակական կապերի.

Իրերի այդպիսի գրութիւնը բուժելու համար, բանւորները մտց բել են կօպերա-

տիւ սիստէմը: Այս սիստէմը իր գոյութեան  
առաջին օրերում շատ սխալներ է արել և  
բազմաթիւ դժւարութիւնների է հանդիպել:  
Դժւարութիւններից գլխաւորը կազմակեր-  
պած ընկերութեան զեկավարելն է, ընկե-  
րութեան հաշիւնների կանոնաւոր պահելը,  
որովհետև հաշիւնների անկանոնութիւնը յա-  
ճախ պատճառ է լինում դժգոհութեան և  
կասկածների տեղիք տալով՝ ընկերութիւնը  
քայլքայլում է իր առաջին հսկ օրերում:

Բաւական չէ ընկերութիւններ կազմակերպել, այլ և պիտի կարենալ նաև այդ կազմակերպութիւնը խելացիօրէն կառավարել, պիտի ունենալ վարչական հմտութիւն և փորձառութիւն կամ, վերջապէս, հիմնաւոր պատրաստականութիւն, որպէսզի նորակազմ ընկերութիւնը հէնց առաջին անյաջողութեան հանդէպ չը քայլայէի, որպէսզի հնարաւորութիւն ունենանք խուսափել այդ անյաջողութիւններից։ Բազմաթիւ կօօպերատիւ ընկերութիւններ, շնորհիւ վարիչների ժողովութեան կամ անպատրաստականութեան, հէնց առաջին տարին քայլայէլ են։ Ուստի տեսնում էք թէ որպիսի խոշոր և պատասխանատու պարտականութիւն ունի կատարելու կօօպերատիւ ընկերութիւնների վարչութիւնը։ Ինչ տեսակի կօօպերատիւ ընկերութիւն ուզում է լինի, անհրաժեշտ է ա-

սանձին ուշադրութիւն դարձնել այդ ընկերութեան վարչութեան անդամների և նրանց կազօրութիւնների վրայ, որպէս զի նրանք չօգտւեն իրենց դիրքեց և դաւնան մի նոր ձևի բանակալներ:

Այս ընդհանուր նկատողաթիւնից յետոյ, այժմ տեսնենք թէ կօօպերատիւ կամ համագրողական ընկերութիւնները քանի տեսակ են լինում: Նրանք բաժանում են երեք գլխաւոր տեսակների, այս է՝ 1) սպառողական, 2) արտադրողական և 3) մանր վարկային ընկերութիւններ, թէև այս վերջինը կարելի էր դասել արտադրողական ընկերութիւնների շարքը, ընդունելով կապիտալը արտադրողութեան միջաց: Ինչ տեսակի ուզում են լինին կօօպերատիւ ընկերութիւնները, նրանք բոլորն էլ ունին ընդհանուր կէտեր, այս է՝ 1) նրանք ունին տնտեսական նպատակ, 2) այդ ընկերութիւնների թէ կապիտալը և թէ անդամների թիւը անսահմանափակ է, 3) անդամների մուտքը և ելքը ազատ է, 4) բոլոր անդամները հաւասարապէս օգտուում են ընկերութեան օգուտուներից, 5) ընկերութեան անդամները հաւասար մասնակցութիւն ունին ընկերութեան գործերի մէջ և, վերջապէս, 6) այդ ընկերութիւնները օգտուում են ինքնուրոյն իրաւական իրաւունքներով, այսինքն կօօպերատիւ

ընկերութիւնները հանդիսանում են որպէս  
անկախ իրաւական մարմին, որովհետև նրանք  
բաղկացած են անդամներից և ոչ թէ կապի-  
տալից: Այդ ընկերութիւնները ունին այն  
իրաւական իրաւունքները, ինչ որ, օրինակ,  
մի անհատ ունի. իսկ ակցիօներական կամ  
այլ առևտրա-արդիւնաբերական ընկերու-  
թիւնների մէջ այդպէս չէ: (Օրինակ, գտատ-  
րանի առաջ կօպերատիւ ընկերութիւնը  
ներկայանում է որպէս մի անհատ, որ վայե-  
լում է բոլոր իրաւական իրաւունքները, իսկ  
ակցիօներական և այլ առևտրա-արդիւնա-  
բերական ընկերութիւնները հանդիսանում  
են որպէս մի մարմին), Սրանք են կօպե-  
րատիւ ընկերութիւնների ընդհանուր կէտե-  
րը: Այժմ տեսնենք նրանցից իւրաքանչիւրը  
ինչպիսի ներքին կազմակերպութիւն ունի և  
թէ ինչ է նրանց նպատակը:

Առաջին տեսակի կամ սպառողական  
ընկերութիւնը ամենից շատ զարգացել է  
Անգլիայում, ուր, ինչպէս տեսանք, 1844 թւից  
սկիզբ առնելով՝ տարէցտարի բազմացել է և  
այսօր նրանց թիւը հասնում է 1,800-ի, մօտ  
 $4\frac{1}{2}$  միլիոն անդամներով և 1,300 միլիոն  
դրամագլխով: Այդքան ընկերութիւններից  
միայն 170-ը արտադրողական են, իսկ նա-  
շածը սպառողական ընկերութիւններ են:  
Համարեա թէ բոլոր արտադրողական ընկե-

րութիւնները միացած են սպառողական ըն-  
կերութիւնների հետ, ուստի երբ խօսենք  
Անգլիական կօպերատիւ ընկերութիւնների  
մասին պիտի նկատի ունենանք սպառողական  
ընկերութիւնները միացած արտադրողա-  
կանների հետ: Անգլիական կօպերատիւ ըն-  
կերութիւնների  $93\frac{1}{2}\%$ -ը մի կողմից միացած  
են դաշնակցական կապերով և կազմում են  
մի ամբողջութիւն՝ «Կօպերատիւ Դաշնակ-  
ցութիւն» հիմնած 1869 թւին, միւս կողմից  
միացած խոշորավաճառ (Օ-ճա օպտօն, զայ-  
ուօք) երկու ընկերութիւնների հետ (Կօօ-  
ռերա Ուոլս անգլիա-  
կան հիմնած 1862 թ., միւսը շօտլանդական  
հիմնած 1864 թւին: Այժմ բացատրենք այդ  
երկութիւնը և տեսնենք թէ ինչ գործնա-  
կան օգուտ ունի:

«Կօպերատիւ Դաշնակցութիւնը» (Co-  
operative Union) միացնում է բոլոր սպա-  
ռողական և արտադրողական ընկերութիւն-  
ները բարոյական կապերով. այսպէս նա-  
հիմնում է դպրոցներ, զանազան կրթական  
դասընթացքներ, հիմնում է գրադարաններ,  
նպաստներ է տալիս զանազան տեսակ կըր-  
թական հաստատութիւնների, պահում է  
կերպնապաստում է կրթութեան տարածմանը  
և այսի այդ բոլորից «Կօպերատիւ Դաշնակ-

ցութիւնը» հիմնել է մասնագիտական դըպուցներ, ուր պատրաստում են կառավարիչներ, հաշւապահներ կօօպերատիւ ընկերութիւնների համար: Այդ մասնագիտական գպրոցներում աւանդում են առևտրական գիտելիքներ լիակատար ծրագրով:

Բացի դրանից «Դաշնակցութիւնը» կազմակերպում է կօնցերտներ, ներկայացումներ, դասախոսութիւններ և ամեն կերպ աշխատում է զարգացնել իր անդամների մտաւոր կարողութիւնները: ամենից շատ նա ուշը է դարձնում երեխաների վրայ կազմակերպում է մանկական տօներ, զբունքներ և այլն, մի խօսքով՝ աշխատում է մատաղ սերնդի մէջ մանուկ հասակից արթնացնել սէր և համակրանք դէպի կօօպերացիան: Խոշոր ծառայութիւն են անում նաև շարժական գրադարանները, որոնք բաղկացած են 30—50 արկղներից մասնագիտական գրքերով: Ընկերութեան այն անդամները՝ որոնք հնարաւորութիւն չունին յաճախելու գրադարանները, նրանք դիմում են շարժական գրադարաններին և ստանում են իրենց հետաքրքրող հարցի վերաբերեալ գրքերը գետեղւած մի արկղում: Ահա այս է «Կօօպերատիւ Դաշնակցութեան» պարտականութիւնը — տարածել լուսաւորութիւնը գրթել ընկերութեան արդամներին, դաստի-

արակել նրանց զաւակներին և պատրաստել հասարակութեան համար պիտանի և օգտակար անդամներ: Անշուշտ մի հզօր գործ է այդ, և դա կազմում է անգլիացի կօօպերատուների փառքն ու պարծանքը:

Այժմ անցնենք երկրորդ միութանը, այն է՝ խոշորավաճառ երկու ընկերութիւններին, Kooperative Wholesale Society: Այդ երկու ընկերութիւնները իրար դէմ մըցող չեն, մէկը Անգլիայում, իսկ միւսը Շոտլանդիայում նպաստում են կօօպերատիւ ընկերութիւնների տնտեսական զարգացմանը մատակարարելով նրանց անհրաժեշտ ապրանքներ և նիւթեր:

Միջին թւով իւրաքանչիւր կօօպ. ընկերութեան վրայ Անգլիայում գալիս է 2,400 անդամ, թէև կան ընկերութիւններ, որոնց անդամների թիւը շատ խոշոր է: Այսպէս, օրինակ, Լիդս քաղաքի կօօպ. ընկերութեան անդամների թիւը հասնում է 49,340 հոգու, 1904 թիւ ստատիստիկայից երկում է, որ միայն այդ քաղաքի կօօպ. միութիւնների վրայ ծախել է  $10\frac{1}{2}$  միլիոն ըուբլու ապրանք, սա անկասկած մի խոշոր գումար է, որը ցոյց է տալիս այդ ընկերութիւնների գործունէութեան ընդարձակութիւնը: Լիդսի ընկերութիւնը ունի իր սեփական գործարանները, փուռեր, խողա-

նակի գործարան, պատրաստի հագուստի խանութներ և արհեստանոցներ, խնայողական սնդուկներ և այլն, և այլն. իսկ այդ բոլորի վրայ պիտի աւելացնել նաև ճարտարապետական - շինարարական բիւրօն, որ շինել է թէ ընկերութեան բոլոր շինութիւնները և թէ յանձն է առնում շինելու մասնաւոր տներ և շինութիւններ, ի հարկի անհամեմատ աւելի նպաստաւոր պայմաններով:

Վերոյիշեալ երկու Wholesale ընկերութիւնները \*), որոնք գնում են մեծ քանակութեամբ ապրանքներ արտադրողական կօօպ. ընկերութիւններից և մատակարարում են սպառողական կօօպ. ընկերութիւններին, վերջին տարին կատարել են 282 միլիօն ըռուբլու շրջանառութիւն, ապրանքների  $\frac{1}{5}$ -ը գնել են անգլիական և օտարերկրեայ արտադրողական ընկերութիւններից: Այդ ընկերութիւնները ունին 3 կոշկակարի գործարան, 2 մոմի և սապնի գործարան, կօնֆետների և կօնսերվների գործարան, 2 զօկոլաղի փարբիկ, ծխախոտի գործարան, 2 հատ սպիտակեղնի գործարան, 2 հատ պատրաստի հագուստեղէնի գործարան, մի խօսքով՝ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերն ունին, նոյն

\*) Այդ ընկերութիւնները մի տեսակ պահեստի դեր են կատարում:

նոկ քարածուխի հանքեր, որոնց շրջանառութիւնը 1905 թւին համում էր 2 միլիօն բուրլու, իսկ Հնդկաստանում և Ճէյլօն կզու վրայ ունին թէյի սեփական պլանտացիաներ, բոլոր թէյը տեղափոխում են ընկերութեան նաւերով, որոնց թիւը համում է 7-ի: Ահա տեսնում էք թէ ինչպիսի հզօր ոյժ է ներկայացնում Անգլիայի կօօպերատիւ ընկերութիւնների դաշնակցութիւնը. նա ոչ միայն բաւականանում է ներքին շուկայով, այլ և մասնակցում է միջազգային շուկաներին. նա ամեն տեղ ունի իր գործականները, ըրոնք հում նիւթեր գնելով ուղարկում են Անգլիա, ամեն տեղ, ուր հնարաւոր է, նրանք ոտք են դնում և հաստատում են առևտրական յարաբերութիւններ: Նրանց արտադրութիւնը անցնում է 100 միլիօն ըռուբլուց. նրանց գործարաններում պշսատում են 30,000 բանւոր, որոնք աշխատում են աւելի նպաստաւոր պայմաններում, այսպէս օրինակ 8 ժամւայ աշխատանք, աշխատանքի ապահովութիւն, խոշը աշխատավարձ և այլն: Սակայն համեմատելով բելգիական կօօպերատիւ ընկերութիւնների հետ, անգլիական կօօպ. ընկերութիւնները շատ հեռու են ընկերութեան և հաւասարութեան սկզբունքի իրականացումից: Այստեղ նոյն բանւորներն են, որոնք

աշխատում են, միայն աւելի նպաստաւոր աշխատանքներում և արիշ ոչինչ. նրանք չեն կարող համահաւասար ընկեր լինել, ինչպէս Բելգիայում:

Չըմուանանք յիշել նաև կօօպերատիւ ընկերութիւնների սեփական բանկը, որի միջոցով կատարւում են ընկերութեան դրամական գործողութիւնները և որից ընկերութիւնները փոխառութիւն են առնում: Այդ բանկի շրջանառութիւնը 1902 թւին հասնում էր 846 միլլիօն բռնըլու:

Այժմ տեսնենք, թէ մի այդպիսի հակա կազմակերպութիւն, ինչպիսին անգլիական կօօպերատիւ ընկերութիւնն է, որչափ կարողացել է օգտւել իր ուժերից բաղաքական աշխարհում նւաճումներ անելու: Դժբաղդար անգլիական կօօպերացիան չի կարողաց ցել օգտւել իր ուժերից, իր չորս միլլիօն կօօպերատորների ձայնից և հանդէս չի եկել որպէս պարլամենտական մի անկախ փրակցիա. յաճախ նա գնացել է բուրժուազիայի յետից, յաճախ նրանք բաժանւել են հակառակ ուղղութիւնների և երբէք իբրև մի ամբողջութիւն հանդէս չեն եկել: 1907 թւին Praisley-ում կայացաւ անգլիական կօօպերատորների 37-րդ համագումարը, ուր միջի այլ խնդիրների արծարծւեց նաև քաղաքականութեան վերաբերեալ հարցը, թէ

անգլիացի կօօպերատորները ինչպիսի դիրք պիտի բռնեն այդ հարցում: Բաւական թե՛ր և դէմ կարծիքներից յետոյ, ժողովը ընդունեց վելիանիի առաջարկութիւնը, որ կօօպերացիան հանդիսանալով դէմօկրատիկ կազմակերպութիւն, պիտի ունենայ իր որոշ հայեցակէտը քաղաքականութեան վերաբերմամբ և պիտի հանդէս գայ որպէս մի ամբողջութիւն պաշտպաննելու իր սկզբունքները, ուստի պարլամենտում նա պիտի ունենայ իր ներկայացուցիչը: Այդ առթիւ ընտրւեց «պարլամենտական կօմիտէ», որը պիտի պրօպագանդա մղէ յաջողեցնելու կօօպերատորների թեկնածութիւնը:

Անգլիական կօօպերատորների խոշոր պակասութիւնը այն է, որ նրանք չեն կարողացել բելգիական կօօպերատորների նման տարածել սօցիալիստական զաղափարը ժողովրդի մասսաների մէջ: Մինչդեռ Բելգիայում կօօպերատիւ միութիւնները ամբողջովին յարում են այս կամ այն քաղաքական կուսակցութեանը, ընդհակառակը Անգլիայում նրանք միշտ չէղոք են եղել և շատ քիչ են աշխատել սօցիալիստական զաղափարը տարածելու իրենց անդամների մէջ: Նրանք աւելի մէծ ուղաղը ութիւն դարձել են իրենց անդամների անտեսականի վրայ և աւելի շուտ

հանդիսացել են որպէս զուտ առևտրական հաստատութիւններ, ինչպէս օրինակ Wholesale-ը. Այդ խոշոր պակասութեան պատճառով Անգլիայի սօցիալիստ կուսակցութիւններից շատերը ոչ միայն թերհաւատութեամբ են վերաբերում կօօպերացիային, այլ և թշնամաբար. ահա թէ ինչ է ասում անգիտացի սօցիալիստներից մէկը, Alemand-ը. «Կօօպերացիան մի մեռեալ ծնւած սիստեմ է. ես կօօպերատօր եմ, սակայն միայն պարտականութեամբ, իմ ընկերներին ցոյց տալու համար, որ ես չեմ ուզում խանգարել նրանց ջանքերը պատկելու գործին, իսկ ներքուստ ես կոփու եմ մղում կօօպերացիայի դէմ...»: Սօցիալիստ կօօպերատօրի այդ խօսքը վերաբերում են ինարկէ անգլիական կօօպերատիւ կազմակերպութիւններին, նա նոյն կարծիքը չէր կարող յայտնել բնկիւ ական կօօպերատօրների մասին, որոնք կօռագերացիայի ընդհանրացումով տարածում են սօցիալիստական մոքերը նոյն իսկ բել գիտի ամենախուլ անկիւնները:

Գերմանական կօօպերատիւ ընկերութիւնների ներքին կազմակերպութիւնը նոյն ձևով է, ինչ որ անգլիականը, միայն թէ այստեղ ընկերութիւնների ծագումը տարբեր է, ինչպէս տեսանք, Անգլիայում սկիզբ են առել ամենից առաջ սպառողական ըն-

կերութիւնները: Բօչդէլ քաղաքում հիմնը- ւել է առաջին անգլիական սպառողական ընկերութիւնը 1844-ին կօօպերատիւ սկզբունքներով. տեսանք թէ այդ ընկե- րութեան սկզբնաւորութիւնը կատարեց Օուլքինի քարոզների ազդեցութեան տակ- տիսանք թէ ինչպիսի հոկայական քայլերով նրանք առաջ են գնում և այն: Նոյն յաջո- ղութեամբ Գերմանիայում զարդացան մանր վարկային ընկերութիւնները, որոնք դարձեալ հիմնում են կօօպերատիւ սկզբունքներով: Թէ ինչու Գերմանիայում զարդացան աւելի շուտ մանր վարկային ընկերութիւնները և ոչ թէ սպառողականը կամ արտադրողա- կանը, զա ունի իր յատուկ պայմանները, որոնցից կը յիշենք հետեւեալը: Անցեալ դարու- երկորդ կիսում Գերմանիայի արհեստա- ւորութիւնը սոսկալի տագնապներ կը եց, նա չը կարողանում դիմանալ կապիտալիստնե- րի, խոշոր գործարանների հարւածներին, և օրըստօրէ մանր արհեստաւորութիւնը դուրս էր մղում շուկայից: Արհեստաւորները սոս- կալի նեղութիւններ էին կրում, չունէին դրամագույն, ոչ մի նիւթական օժանդակու- թիւն, որպէսպիս կարողանային պահել իրենց գոյութիւնը և կարողանային դիմանալ մրցումին: Նրանք մտածեցին, որ անհրա- ժեշտ է արհեստաւորութեան գոյութիւնը

պահպանելու համար միջոցներ որոնել, կապիտալ և վարկ ձեռք բերել, և ահա այդ նպատակով հիմնուում են մանր վարկային ընկերութիւններ, որոնք կարծ ժամանակում պատում են ցանցով ամբողջ Գերմանիան:

Բացի մանր վարկային ընկերութիւններից, Գերմանիայում սկսեցին հիմնել և բազմանալ նաև միւս տեսակի կօպերատիւ ընկերութիւնները, որոնք սկզբում ոչ մի քաղաքական գոյն չունէին, սակայն վերջերը բանոր գասակարգը ասպարէզ գալով իր պահանջներով, օգտագո նաև կօպերացիայից, որպէս մի ուժեղ միջոցից, թէ սօցիալստական մտքերը քարողելու և թէ կազմակերպւած կոիւ մղելու կապիտալիզմի դէմ. նրանք տեսան որ սպառողական միութիւնները ամենալաւ միջոցներն են կապիտալին հարածելու համար և այդ նպատակովնրանք աւելի սերտ կապեր հաստատեցին բոլոր սօցիալիստական կօպերատիւ ընկերութիւնների մէջ: Աւելիրդ եմ համարում մանրամասն խօսել այն ներքին կոիւների մասին, որ մի քանի տարիներ տեսեցին կօպերատիւ ընկերութիւնների զանազան հոսանքների մէջ. դա մի անխուսափելի կոիւ էր սօցիալիստ և բուրժուա հոսանքների մէջ. այդ խուլ կոիւը տևեց, մինչև որ 1903 թւին կրէցնախի համագումարում 99 սպա-

ռողական ընկերութիւններ անջատուեցին և կազմեցին «Կենդրոնական Դաշնակցութիւն» (De Zentralverbaud Deutscher Konsumvereine): Այդ անջատումը կեանքի անհրաժեշտութիւնն էր և ինն ամիս յետոյ այդ Դաշնակցութեան մէջ մտնում է 600 ընկերութիւն, իսկ 1907 թւականին նրանց թիւը հասնում է 929-ի 781,369 անդամներով, սա անկասկած միծ յաջողութիւն է, որի տեսակը կօպերացիայի պատմութիւնը չի տեսել: (1900 թւին անդամների թիւը 1,000 էր):

«Կենդրոնական Դաշնակցութեան» ներքին կազմակերպութիւնը այսպէս է. նա բաղկացած է եօթ հատ խոշոր տեղական միութիւններից», որոնք կոչւում են Revisionsverbäude, յետոյ մի ընկերութիւն էլ մեծաքանակ առևտուրի համար, ինչպէս անգլիական Wholesale-ը, և կոչւում է «Համբուրգեան ընկերութիւն»: Ինչպէս որ Անգլիայում, այսուեղ էլ այդ երկու տարրեր մարմինները, այսինքն «Կենդրոնական Դաշնակցութիւնը» և «Համբուրգեան ընկերութիւնը» ունին անգլիական «Դաշնակցութեան» և Wholesale-ի պարտականութիւնները: Նրանցից առաջինը, այսինքն «Կենդրոնական Դաշնակցութիւնը» ունին անգլիական Դաշնակցութեան Դաշնակցութիւնը գործում է կրթութեան և բարոյականութեան սահմաններում, նա հողս է տանում իր անդամների

մտաւոր և բարյական զարգացման վրայ,  
հրատարակում է գիտական և այլ աշխա-  
տութիւններ, կազմակերպում է գասահա-  
սուեթիւններ, ներկայացումներ և այլն, և  
այլն, նպաստում և օժանդակում է գալոց-  
ներին, հիմնում է մասնագիտական դպրոց,  
ուր, ինչպէս Անգլիայում, պատրաստում են  
կառավարիչներ և հաշըապահներ կօպերա-  
տիւ ընկերութիւնների համար և այլն։ Իսկ  
«Համբուրգեան ընկերութիւնը», ինչպէս  
անգլիական Wholesale-ը, մատակարարում է  
իր անդամներին ապրանքներ գնւած արտա-  
դրողական կօպերատիւ ընկերութիւններից,  
Այդ ընկերութեան տարեկան շրջանառու-  
թիւնը 1906 թւին հաւասար էր 46,503,237  
ըուբլու. ընկերութիւնը ունի մի քանի սե-  
փական գործարաններ, աահեստներ և ան-

Ահա այդ է գերմանական սպառողական լինկերութիւնների ներքին կազմակերպութիւնը, որը միայն մանրամասութիւններով է տարբերում անզլիական սպառողական միութիւններից։ Ամենախոշոր տարբերութիւնը որ կայ այդ երկու երկրների կօպերատիւ լինկերութիւնների մէջ, այդ նրանց քաղաքական գոյնն է, այն ուժեղ կապը, որ գոյութիւն, ունի գերմանական բանուրական շարժման և սպառողական լինկերութիւնների մէջ, այդ կապը օրոստօրէ

ամրանում է, և կարելի է ասել, որ գերժանական սպառողական ընկերութիւնները ընթանում են սօցիալ-դէմօկրատիայի հետ Այս չափով սահմանափակենք մեր ասելիքը դիրմանական կօօպերատիւ ընկերութիւնների ներքին կազմակերպութեան մասին:

Դժբաղղաբար այգպիսի ուժեղ և կարպատահ կազմակերպութիւն մենք չենք տեսնում կօօպերացիայի միւս հայրենիքում, Ֆրանսիայում, ուր բազմաթիւ սպառողական ընկերութիւններ կազմում են միքանի մնջատ «գաշնակցութիւններ», որոնք ոչ թէ նպաստում են կօօպերացիայի զարդացմանը, այլ շատ դէպքում խանգարում. թէև այդ ընկերութիւնները տարեցտարի աճում են, բայց մի մասը զուտ առևտրական-շահադիտական են, միւս մասը մանրբուրժուական, երրորդը սինդիկալիստ և այլն. Ֆրանսիացի կօօպերատորների շանքերը՝ միացնելու այդ բոլոր անջատ միութիւնները և մի ուժեղ «գաշնակցութիւն» կազմելու անցել են իզուր: Ներքին կազմակերպութիւնները իրարից տարրերում են, մի մասը հիմնած է Բօչէլի ոկզեռնքով, միւս մասը նման է բելգիական սօցիալիստ կօօպերատիւ ընկերութիւններին: Այդ տեսակէտից աւելորդ եմ համարում մանրամասն կանգ առնել ֆրանսիական սպառողա-

կան ընկերութիւնն ի զբայ. յիշենք միւ-  
այն, որ այստեղ աւելի զարգացած են արտա-  
դրողական ընկերութիւնները, որոնց ներ-  
քին կազմակերպութեան բնորոշ կէտն այն  
է, որ ընկերութեան բոլոր անդամները  
համահաւասար իրաւունքներով ընկերներ  
են, որոնք մասնակցում են ընկերութեան  
շահին և վնասին. Մինչև անդամ օրէնըս-  
դրական աշխարհում Ֆրանսիայի կօօպերա-  
տիւ ընկերութիւնները չեն կարողացել ձեռք  
բերել որոշ արտօնութիւններ. Նրանք հա-  
մարում են սովորական ակցիօններական  
ընկերութիւններ, իսկ այդ հանգամանքը խան-  
գարում է այդպիսի ընկերութիւնների զար-  
գացմանը. Անհամեմատ աւելի բարձր են թէ  
լարոյական և թէ խելացի կազմակերպու-  
թեան տեսակէտից բելգիական կօօպերատիւ  
ընկերութիւնները, որոնց մասին անհրա-  
ժեշտ է երկու խօսք ասել:

Բելգիայում կօօպերացիան մուտք գոյ-  
ծեց 80-ական թւականներին. սկզբում  
կաթոլիկները և լիբերալները օգտագին կօ-  
օպերացիայից, որպէս մի ուժեղ զէնքից իրենց  
ազդեցութիւնը տարածելու ժողովրդի մաս-  
սաների վրայ. Օգտականվ բելգիայի գիւղա-  
ցիների կրօնամոլով թիւնից, կաթոլիկները  
մեծ յաջողութիւն ունեցան զիւղերում և  
ամեն տեղ հիմնեցին կօօպերատիւ միու-

թիւններ. Պիտի խոստովանւել, որ կաթո-  
լիկները ղեկավարում էին դեմօկրատական  
սկզբունքներով, և մասամբ էլ դրան պիտի  
վերագրել նրանց յաջողութիւնը: Բայց եր-  
կար չի տևում կաթոլիկների ազդեցութիւնը,  
երկան է դալիս բանւորական կուսակցու-  
թիւնը իր թարմ, խելացի և ուժեղ պրօ-  
պազմնդայով, կարճ ժամանակում գրա-  
ւում է բանւորական մասսաները, ամբողջ  
կիէժի ածխահանքերի շրջանը պատռում է  
բանւորական կազմակերպութիւններով, հիմ-  
նում է սպառողական միութիւններ բան-  
ւորների համար, ազատում է բանւորնե-  
սին տղրուկմանը առաջանական այդ մի-  
ութիւններից ստացած օգուտը գործադրում  
է սօցիալիստական պրօպագանդայի: Սա-  
կայն սօցիալիստ կուսակցութիւնը չի գո-  
հանում միայն բանւորական շրջաններով.  
Նա իր ուշադրութիւնը դարձնում է գիւղե-  
րի վրայ, նա աշխատում է այնտեղ տարա-  
ծել սօցիալիստական գաղափարը, բայց  
ինչպէս, քանի որ կաթոլիկները վաղուց  
բոյն էին դրել գիւղերում, իրենց կօօպերա-  
տիւ կազմակերպութիւններով գրաւել էին  
գիւղացիներին: Ահա նրանք որոշում են, և  
չեն սխալում, համահաւասար զէնքերով  
կուելու կաթոլիկ հակառակորդների զէմ-  
նրանք ուզում են օգտւել կօօպերացիայից,

որպէս մի ուժեղ միջոցից, սօցիալիստական գաղափարը տարածելու գիւղերում և ուղարկում են պրօպագանդիստներ, քարոզում ևն կօպերացիայի գաղափարը, ճիմսում են գիւղական կօպերատիւ միութիւններ, և մի քանի տարւայ գործունէութիւնից յետոյ գիւղերը, գիւղական կազմակերպութիւնները մտնում են բիլգիական բանւորական սօցիալիստների կազմակերպութեան մէջ, գիւղական կօպերատիւ միութիւնները գանում են այդպիսով սօցիալիստական կազմակերպութիւններ և ձեռք-ձեռքի տւած բանւորական կուսակցութեան հետ՝ յառաջ են խառնում կատարելու նորանոր նւաճումներ, բնդկանը այդպիսով սօցիալիստական մաքուր գաղափարը:

Այդ է ծագումը Բելգիայի սօցիալիստ կազմակերպութեան կօպերատիւ միութիւնների, որոնք հանդիսանում են բանւորական կազմակերպութեան քաղաքական և արհեստակցական օգտակար կողմը։ Այն միմիայն կօպերացիայով, անկասկած նրանք կորցըել են իրենց յեղափոխական ողին, բնչպէս տեսանք Անգլիայում։ իսկ այն երկում կօպերացիային, գարձեալ վնասումն, որովհետեւ ձեռքից թողնում են ժողովրդա-

կան մասսան, ինչպէս օրինակ Ռուսաստանում, ուստի չը պիտի ընկնել ոչ մէկ և ոչ միւս ծայրահեղութեան մէջ, այլ պիտի կարողանալ կօպերացիայից հանել գործնական օգուտներ, ի նպաստ բանւորական շարժման։ նա պիտի ծառայի սօցիալիստների ձեռքում որպէս պրօպագանդայի մի ուժեղ զէնք. կօպերացիայի միջոցով ստացած օգուտները պիտի գործադրել սօցիալիստական գաղափարների տարածմանը, — անա այն խոշոր օգուտը, որ մեզ տալիս է կօպերացիան։ Եւ այդ ձգմաքառութիւնը լաւ ըմբռնել են բելգիական սօցիալիստները։ Նրանք բարձրացնում են կօպերացիայի միջոցով ոչ միայն բանւորի կամ գիւղացու տնտեսական կացութիւնը, այլ և նրա մտաւոր մակերեսոյթը, նրանցից պատրաստում են հասարակութեան համար քաղաքականապէս հասուն անդամներ։

Այժմ երկու խօսք ասենք նրանց ներքին կազմակերպութեան մասին։

Սօցիալիստական բոլոր կօպերատիւ Ընկերութիւնները և միութիւնները միացած են դաշնակցական կապերով և կազմում են մի ուժեղ «կօպերատիւ Դաշնակցութիւն»։ Ընդհանրապէս այստեղ սօցիալիստական կօպերատիւ ընկերութիւնները ճիմսում են ժողովրդական տներ, սկզբում իհարկէ

միոքրիկ ծաւալով, յետոյ արդէն շինում են հսկայ շինութիւններ մի քանի յարկանի: Այդ տներում դուք կը գոռնէք ամեն ինչ, — սպառողական խանութ (մթերքների, կտորի, դէնի, մանրավաճախի, հագուստեղէնի և այլն), փուռեր, կաֆէներ, ուր կօօպերատորները յաճախ անցնում են իրենց ազատ ժամերը, ընթերցարան, էժանագին ճաշարան, դահլիճ դասախսութիւնների և ներկայացումների համար. այդտեղ են կենդրուացած արձեստակցական բանտորական միութիւնների կենդրուական վարչութիւնը, սնդուկը, աշխատանքներ որոնող բիւրօն և այլն: Այսպիսով ժողովրդական տունը հանդիսանում է բոլոր սօցիալիստական միութիւնների կենդրոնը, որը ունի իր բաժանմունքները քաղաքի զանազան մասերում: Այդպիսի ժողովրդական տներ հիմնւած են համարեաթէ բելգիական քաղաքի Սովորութիւնը քաղաքների ժողովրդեայ Օստանդ քաղաքի ժողովրդական տունը տալիս է ամեն տեսակ յարմարութիւններ բանտորներին՝ այնտեղ անցնելու հանգստեան ամիսները, օգտւելու ծովային լողարաններից և այլն:

Ցիշենք նաև այն, որ նրանց խանութներում և արհեստանոցներում բանտորները աշխատում են ամենանպաստաւոր պայմաններուն՝ այսպէս օրինակ 8 ժամւայ աշխա-

տանք, դժբաղդ դէպքերի տապահովագրական սնդուկներ, գործազուրկ ժամանակ բանւուրը շաբաթական ստանում է 11 ֆր. մինչև 10 շաբաթ, վերջապէս գործարանները շինւած են տեխնիքական նորագոյն յարմարութիւններով, տպարաններում և գործարաններում դրւած են օդամաքըրոդ գործիքներ և այլն: Մի խօսքով՝ Բելգիայի սոցիալիստ կուսակցութիւնը ամեն կերպ աշխատել է և աշխատում է բաւարարութիւն տալ բանտորների բոլոր պահանջներին: Այդ կուսակցութիւնը բարելաւելով բանտորի և գիւղացու տնտեսական դրութիւնը, պատրաստում է նրանցից կրթւած և գիտակից մարտիկներ ապագայ խորու սօցիալիստական փոփոխութիւնների համար: Անա միակ կազմակերպութիւնը, որ կարողացել է խելացիօրէն օգտւել կօօպերացիայի պառլիներից յօդուտ սօցիալիզմի:

Ինչ վերաբերում է վարկային ընկերութիւնների ներքին կազմակերպութեանը՝ ապա նախ պիտի ծանօթանալ վարկային ընկերութիւնների զանազան տեսակների հետ, որոնք են՝ Շուլց-Դելիչի փոխառութիւնայողական սնդուկները (ссудо сберегательная касса) և Արյֆէղէնի վարկային ընկերութիւնները (кредитное т-во): Այդ երկու տեսակի ընկերութիւնների տարե-

քերութիւնը հետևեալն է, առաջինի, այսինքն փոխատու-խնայողական մնդուկի հիմնական դրամագլուխը կազմւում է ընկերութեան անդամավճարներից կամ պայերից, Նախքան ընկերութեան բանալը, հիմնադիր-անդամները ընդհանուր ժողովում որոշում են պայերի բանակութիւնը և գինը, թէև քառակութիւնը կարող է յետոյ փոփոխութեան հնթարկւել Մինչդեռ վարկային ընկերութիւնները իրենց հիմնական դրամագլուխը ստանում են փոխատութեամբ, կամ որպէս նւէր, կամ ուղղակի փոխ են առնում զեմստույից, գիւղական համայնքից կամ պետական բանկից: Այստեղ արգէն բաժնադինի կարիք չկայ, մինչդեռ առաջին տեսակի մէջ բաժններ կազմելու համար անդամավճարները պարտաւորեցուցիչ են: Յաճախ փոխատու-խնայողական մնդուկները անկարող են իրենք բաժնեվճարով կազմել ընկերութեան հիմնական դրամագլուխ, ուստի ստիպւած են դարձեալ դիմել օտարի օգնութեանը, կամ նւէր ստանալով, կամ փոխ վերցնելով մանր վարկի գործերի վարչութիւնից, որ գտնում է պետական բանկին կից:

Ես մանրամասն կանգ չեմ առնում մանր վարկի ընկերութիւնների ներքին կազմակերպութեան, նրա կանոնադրութեան վրայ, այդ առթիւ կարելի է ամբողջ մի

դասախրանութիւն նեփրել. միայն կըյիշեմ ընդհանուր կարեոր կէտերը: Այսպէս օրինակ երկու տեսակի ընկերութեան թէ հիմնող և թէ միւս անդամները պատասխանառու են այդ ընկերութեան առաջ. նրա պարտատէրերի առաջ պատասխանառու են որոր անդամները հաւասարապէս և թէ փոխադարձ երաշխաւառութեամբ: Երկրորդ հիմնական կէտն այն է, որ ընկերութեան գործերը վարում է ընդհանուր ժողովը, թէ ընտրում են վարչութիւն և խորհուրդ: Վարչութիւնը վարում է ընկերութեան գործերը, իսկ խորհուրդը որոշում է փոխառութեան բանակը և թէ որին կարելի է փոխառը ինչ նպատակով և այն: Պիտի յիշել, որ ընկերութիւնը փոխ տալիս է միայն արդինարերական նպատակով և ոչ թէ զուտ անձնական կարիքների համար (օր. կնունք, պակադրութիւն և այլն): Խուսաստանում պակադրութիւն նաև մի երրորդ տեսակի գոյութիւն ունի նաև մի երրորդ տեսակի վարկային ընկերութիւն, որ կոչում է համայնքական կամ հաղարակական, որը հիմնում է համայնքը իր միջոցներից և լիովին պատասխանառու է ընկերութեան պակասութիւնն առաջ: Այս ընկերութեան պակասութիւնն այն է, որ օգնում է միայն համայնքի անդամներին:

Պիտի յիշել նաև այն, որ մանր վար-

Կի մէջ բոլոր ընկերները հաւասարապէս պատասխանառու չեն ընկերութեան առաջ, այլ համեմատական չափով ըստ իրենց վարկի բանակութեան։ Վարկային ընկերութիւնները կատարում են նայն գործերը, ինչ որ փոխառութիւնայողական սնդուկները, այսինքն դրամ են փոխ տալիս փոքրիկ տուկոսով, աւանդներ են վերցնում, ապրանք են գնում և ծախում և այլն։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ այդպիսի ընկերութիւնները ինչ ձեռվ են կազմուում, դա արդէն գործնական խնդիր է, ուստի ես այստեղ չեմ շօշափում։

Այսպիսով ես ցոյց տվի կօօպերատիւ ընկերութիւնների երեք խոշոր տեսակների ներքին կազմակերպութիւնը. թէ այդ ընկերութիւնները ինչպիսի բարերար ազգեցութիւն ունին մեր ժողովրդի, մանաւանդ գիւղական դասի վրայ, այդ կը տեսնենք մեր յետագայ դասախօսութեան մէջ \*), կը տեսնենք թէ կազմակերպչական ոգին, ընկերակցական գաղափարը ինչնպէս բարելաւում է գիւղացունեւութիւնը ինչպիսի բարելաւում է գիւղացունեւութիւնը, ուստի ես վերջացնում եմ իմ այսօրւայ դասախօսութիւնը էնդէլսի խօսքերով. «մեր պարտականութիւնը դէ-

\*) Տես «Գիւղական կօօպերատիւ միութիւն» ներ՝ աշխատութիւն։ Ս. Գ.

պի մանր սեփականատէր գիւղացիները կայանում է ամենից առաջ նրանում, ով նրանց մասնաւոր սեփականութիւնը և նրանց մասնաւոր արտադրութիւնը գարձնենք համայնական», իսկ այդ բանի համար կօօպերացիան միակ և ամենագորեղ միջոցն է, որ սկսել է արդէն իրականանաւ հայկական կեանքում։

#### IV ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կօօպերացիայի կարեւորութիւնը մեր երկրի տնտեսութեան զարգացման համար։

Նախընթաց գասախօսութեան մէջ ցոյց տվինք թէ կօօպերացիան որպիսի հսկայական չափեր է առել արևմտեան եւրոպացում, թէ նա ինչպիսի խոր արմատներ է ձգել աշխատաւոր ժողովրդի մէջ։ Այս պերճախօս ստափասիկական թւերը, որ մենք ցոյց տվինք նախընթաց դասախօսութեան մէջ, գալիս են մի անգամ ևս ապացուցաւ մեր պարտական սխալ հիմքերի վրայ նելու թէ կօօպերացիան սխալ հիմքերի վրայ

չէ դրւած, որ նա երաղ չէ, անիրականալի իդէա չէ, այլ ընդհակառակը նա դրւած է իրական հիմունքների վրայ և որ այդ հիմունքները պատահական երևոյթներ չեն, այլ հասարակական-տնտեսական կեանքի ուսումնասիրութիւններ, դաւն փորձերի, գիտականների անխոնջ աշխատանքների արդիւնքներ են, ուստի կօօպերացիայի հիմունքները կարելի է ամենայն իրաւամբ անւանել իրական և գիտական, կայուն և անսասան հիմքեր, որոնց վրայ կառուցած շնչքը երբէք չի ընկճի հակառակորդների նոյն իսկ ամենառութեղ հարւածներից:

Կապիտալիստների սարսափը կօօպերացիայի յառաջխաղաղացութեան դէմ անտեղի չէ. նրանք տեսնում են, որ կօօպերացիան միացնելով աշխատաւորներին, ժողովելով միատեղ նրանց փոքրիկ տնտեսութիւնները, կազմում է մի ուժեղ հակառակորդ, որի հետ վաղ թէ ուշ ընդհարում տեղի կունենայ, և այդ ընդհարումը կը լինի մի ճակատագրական կորի, կեանքի և մահւան խնդիր երկու հակառակորդ կողմերի համար. Առա այդ անխուսափելի ընդհարումը նկատի առնելով, միւս կողմից էլ միանում են կապիտալիստները կազմելով տրիստաններ հականարւած տալու կօօպերացեային:

Սակայն կօօպերացիայի հիմունքները ամուր են, նա կառուցւած է հաւասարութեան, մարդասիրութեան և արդարութեան վսկեմ գաղափարների վրայ, նրան պատրաստում է ինքը աշխատաւորը իր թիկունքներով, ուստի նա միշտ կայուն է և հսկայական քայլերով առաջ է գնում նաև անձեռնոր երկիրներ, մութ ու խուլ անկիւններ, տարածելով քաղաքակրթութիւն և լուսաւորութիւն: Նա արդէն ուսք է գրել նաև մեր երկիրը և սկսել է իր նւաճումները: մեր երկիր աշխատաւորի և պիւղացու համար այլև խորթ չէ համագործակցութեան գաղափարը, նա շատ տեղերում իրականացել է և սկսում է իրականանալ, մանաւանդ գիւղերում: Կօօպերացիայի իրականացման գործում խոշոր դեր ունի մեր ինտելիգենցիան, մանաւանդ գիւղական ինտելիգենցիան, նրանք, ըրոնք ապրելով գիւղական հասարակութեան մէջ, աւելի մօտ են գիւղացու վշտերին, ոգոնք անկեղծօրէն նւիրւած են այդ գործին և աշխատում են ազատել գիւղացուն վաշխառուների ու բռունցըների հիբաններից, որոնք ջանք են թափում բարելաւելու գիւղացու տնտեսութիւնը: Անկասկած ծանր պարտականութիւններ են դրւած հայ մոռաւոր երկառապը և թարմ ուժերի առաջ. նրանցից պահանջում են զո-

հողութիւն, և նա տալիս է այդ զոհաբերութիւնը, համոզւած լինելով, որ «միծ գործ մեծ զոհեր են պահանջում»:

Աշխատաւորի և գիւղացու տնտեսական վիճակը բարւոքելու համար անհրաժեշտ են նախաձեռնողներ, և այդ դերը պիտի կատարի դարձեալ հայ լիտերիգենցիան. նա պիտի արթնացնի մեր աշխատաւոր մասնայի ինքնագործունէութիւնը. ամեն ասպարիջում: Մի խոշոր պակասութիւն, որ ունի մեր ժողովուրդը; դա նախաձեռնող ոդու և ինքնագործունէութեան բացակայութիւնն է, մինչդեռ կրանք անհրաժեշտութիւններ են ժողովրդի տնտեսութեան զարգացման գործում: Սակայն միայն այդ չէ, որ պակասում է մեր ժողովրդին. մեր մէջ զեր ևս այնպիսի ծաւալ չի ստացել նաև հաւաքական գործունէութեան գաղափարը կամ համագործակցութիւնը: Իսկ մի այնպիսի երկիր, ուր չկան խոշօր կապիտալներ, ուր կապիտալի պահանջը շատ է առաջարկից, այդպիսի երկրներում համագործակցութիւնը կամ կօօպերացիան հանդիսանում է մի անհրաժեշտութիւն. նա մի կողմից բարելաւում է աշխատաւորի կացութիւնը, միւս կողմից էլ բարձրացնում է երկրի տնտեսութիւնը:

Եթէ որևէ երկրունի բնական հարըն-

տութիւններ, եթէ երկրի ազգաբնակութիւնը օժտած է ընդունակութիւններով, սակայն չունի միջոցներ, չունի կապիտալ որևէ արդիւնաբերող աշխատանք կատարելու կամ շահագործելու իր երկրի բնական հարատութիւնները, ապա այդպիսի երկրում արդիւնաբերութիւնը չի կարող զարգանալ չի զարգանայ հետեւապէս նաև այդ երկրի ժողովրդի տնտեսութիւնը:

Այդպիսի երկրներում պիտի արթնացնել ժողովրդի գիտակցութիւնը և ընթանել տալ հաւաքական գործունէութեան գաղափարը: Բայց հաւաքական գործունէութեան ժը տեսակը պիտի ընտրել չէ որ զանագան տեսակ առևտրական ընկերութիւնները գարձեալ հաւաքական են: Սյս հարցին մենք պատասխանել ենք մեր նախկին զասախօսութիւնների մէջ, ցոյց տալով որ միան համագործակցական կամ կօօպերատիէ հիմունքներով կազմւած ընկերութիւնները համապատասխանում են աշխատաւորների շահերին, միայն կօօպերացիայի սկզբունքները ընդհանրացնելով և իրականացնելով մենք կարող ենք բարձրացնել թէ բանւոր և թէ գիւղացու տնտեսական վիճակը, հետեւապէս նաև մեր երկրի ամբողջ տնտեսութիւնը:

Ես առանձնապէս շեշտում եմ գիւղական կօօպերատիւ միութիւնների կարելու-

թիւնը, քանի որ նա աւելի անհրաժեշտութիւն է մեր երկրի տնտեսութեան զարգացման համար, քանի որ մեր գիւղացու տնտեսութիւնը օրէցօր քայլայւում է մի կողմից վաշխառուներից, միւս կողմից իր գիւղացու գիւղատնտեսական, տղբառութեան շնորհիւ Ռուսաստանի, որպէս և կողկասի ազգաբնակութեան 90% -ը գիւղացիութիւնն է կազմում, նեմեապէս բարձրացնելով երկրի ազգաբնակութեան 90% -ի տնտեսական գիճակը, մենք բարձրացրած կը լինինք նաև երկրի տնտեսութիւնը: Ուրեմն պարզ է, որ առաջին տեղը պիտի տալ գիւղական կօօպերատիւ միութիւններին:

Նախընթաց դասախոսութեանս \*) մէջ ես յիշեցի թէ գիւղացին կօօպերատիւ ընկերութիւնների միջոցով որքան օգուտներէ ստանում, տարեկան որչափ է տնտեսում, ուստի պարզ է՝ որչափ որ գիւղական կօօպերատիւ միութիւնները շատ լինին, այնչափ էլ նրա օգուտները կը կրկնապատկւնն, նրա տնտեսութիւնը կը բարելաւի, նեմեապէս կը բարձրանայ նաև ամբողջ երկրի տնտեսութիւնը: Մեր յայտնի գիւղատնտեսպ. Ա. Քալանթարը իր դասախոսութիւնը մէկում ազացուցեց թէ գիւղացին միմիայն կակմակերպւած կաթնատնտեսու-

\*) Տես իմ «Հիւղական կօօպ. միութիւն»: Ա. Գ.

թեան միջոցով որչափ օգուտ կարող է ստանալ, իսկ եթէ նա պարապի, բացի կաթնատնտեսութիւնից, նաև անասնապահութեամբ և գիւղատնտեսական այլ ճիւղերով, ապա նրա օգուտները կը տասնապատկւեն: Իսկ երբ գիւղացին նիւթական միջոցներ չունի պարապելու կաթնատնտեսութեամբ կամ թէ գիւղատնտեսական այլ աշխատանքով, այդ գէպքում նա ինչպէս վարւի: Այս ըստ երեսովին դժւար լուծելի հարցին, լիակատար պատասխան տալիս են մեզ արևմտեան Երապետում կազմւած գիւղական ընկերութիւնները կօօպերատիւ հիմունքներով: Ուրեմն զարձեալ և միայն կօօպերացիան, ուսը ժողովրդի ինքնազործունէութեան արտայատութիւն է, կարող է ազատել գիւղացն իր անելանելի վիճակից. կօօպերացուն իր անելանելի դրամ իր գիւղական աշցիան կըտայ նրան դրամ իր գիւղական աշցիան իւստանքների, արտադրութիւնների համար, իւստանքների, արտադրութիւնների համար, այդ նպատակով կը բաւի հիմնել մանր վարկի ընկերութիւն: կօօպերացիան կը վերակի լանգին նրա քայլայւած տնտեսութիւնը, հիմնելով ման տեսակի գիւղական կօօպ. միութիւններ, կօօպերացիան կը բարձրացնի նրա մտաւոր մակերևոյթը, նա գործնականապէս կը ծանօթանայ տնտեսութեան և արդինապերութեան հետ և այլն, և այլն: Բազմաթիւ են կօօպ. տւած օգուտները թէ

Նիւթական և թէ մտաւոր աշխարհում, ուստի օր առաջ պիտի իրականացնել կօպերացիան իր ամենալայն ծաւալով:

Կենդրոնական Ռուսաստանում տարբեցտարի բազմանում են զանագան տեսակ գիւղատնտեսական ընկերութիւններ, որոնց մեծ մասը հիմնած է կօօպերատիւ սկզբունքով: Ռուս գիւղացին հասկացել է, որ վաշխառուների, գիւղատնտօսական տագնապների դէմ կուելու ամենաուժեղ միջոցը համագործակցութիւնն է, ուստի նու սիրով միանում է իր համագիւղացիների հետ. Նրանք համերաշխատութեամբ և միացած ուժերով իրականացնում են կօօպերացիայի սկզբունքները. Նրանք գործնականապէս տեսնում են կօօպերացիայի տւած օգուտները և աւելի ջերմ հաւատով կպչում են այդ համարդկային գաղափարին: Զնայած արտաքին և ներքին արգելառիթներին, կօօպերացիան ոռւսական գիւղերում հաստառքայլերով յառաջ է գնում. Նա մուտք է գործում ամենամուլթ անկիւնները, ամեն տեղ կազմակերպելով գիւղական միութիւններ, մանր վարկի ընկերութիւններ, ապահովագրող միութիւններ և այլն. և այդ բոլորը կատարում է շնորհիւ ուսւ ինտելիգենցիայի, նրա գիտակից դասի միջոցով. ահա թէ ինչպիսի պարտականութիւն դրւած

Հ սակ մեր, հայ ինտելիգենցիայի առաջ:  
Ռուսաստանի կօօպերատիւ շարժումը  
մի շատ բնողոշ պատկեր է ներկայացնում-  
այսպէս օրինակ կան տեղեր, ուր զարդա-  
ցել են գիւղատնտեսական լնկերութիւն-  
ները, կան տեղեր, ուր բազմացել են մանր  
վարկի լնկերութիւնները, կան տեղեր, ուր  
հիմնում են խնայողական գանձարաններ  
և այլն: Այդ հանգամանքի գլխաւոր պատ-  
ճառը կախւած է տեղական իշխանութեան  
հայեցողութիւնից:

Տեղական իշխանութիւնից:  
Տեղական միութիւնների հետ կամ  
ներով գիւղական միութիւնների հետ կամ  
աւելի ձիշտն ասելով, այդ միութիւն-  
ները իրենց հիմնադրութեան իրա-  
ւունքը ստանալով տեղական իշխանութիւ-  
նից, օրինակ նահանգապահետից, գտնւելով  
այդ իշխանութեան հսկողութեան տակ, պարզ  
է որ մեծ դեր պիտի խաղայ տեղական  
իշխանութեան հայեցակէտը կօպերատիւ  
ընկերութիւնների այս կամ այն տեսակի  
վերաբերմամբ: Հէնց այդ է պատճառը, որ  
կենդրունական Ռուսաստանի մի նահանգում  
զարգացել են սպառողական ընկերութիւն-  
ները, մի այլ նահանգում արտադրողական  
ընկերութիւնները, մի նահանգի գիւղերում  
գործում են մասը վարկի ընկերութիւնները,  
իսկ մի այլ նահանգի գիւղերում գոյութիւն

ունին խնայողական գանձարանները կամ համայնական սնդուկները:

Անկասկած պակաս չեն ազդում կօօպերացիայի այս կամ այն ճիւղի զարգացմանը նաև տեղական ինտելիգենցիան կամ հառարակական հիմնարկութիւնները. մի խօսքով՝ նրանք, որոնք ձեռնարկողի դեր են կատարում, որոնք նպաստում են կօօպերատիւ ընկերութիւնների հիմնելուն, բոլորն էլ մտցնում են իրենց անհատականութիւնը, տալով կօօպերատիւ ընկերութիւնների այս կամ այն տեսակին որոշ առաւելութիւն և հիմնելով կօօպերատիւ ընկերութիւնների այս կամ այն տիպը:

Այսպիսով, ամեն տեսակի կամ տիպի կօօպերատիւ ընկերութիւն հիմնելով մենք միանգամից կատարում ենք մի քանի գործ, որոնք մէկը միւսի հետևանքն են կազմում: Կօօպերացիայի միջոցով տարածում ենք համերաշխութեան ոգին, արթնացնում ենք ազգաբնակութեան ինքնազործունէութիւնը, նրա մէջ մտցնում ենք նախաձեռնութեան սկզբունքը. նա ըմբռնում է համագործակցութեան կամ հաւաքական գործունէութեան կարևորութիւնը, իսկ՝ որ ամենազիշաւորն է, կօօպերացիան բարձրացնում է նրա տնտեսութիւնը, և միջոց է տալիս նրան կուելու գիւղական տզրուկների, իր գարաւոր հակա-

ռակորդների դէմ: Ուստի խարութիւն չպիտի դնել կօօպերատիւ ընկերութիւնների մէջ, նրանք բոլորն էլ ձգտում են նոյն նպատակին, նրանք բոլորն էլ ունին միւնոյն հիմնական սկզբունքները, հետևապէս պիտի ջանալ զարգացնել կօօպերացիան իր ամենասակ ճիւղերով:

Մեր երկրի տնտեսական գրութիւնը և ազգաբնակութեան մտաւոր զարգացման աստիճանը նկատի առնելով, մեզ համար կարմոր են նախ մանր վարկի ընկերութիւններ, որոնք տալիս են նիւթական միջներ անապահով գիւղացուն իր տնտեսութիւնը հոգալու, իր գոյութիւնը պահպանելու և այդպիսով ազատում են նրան գիւղական վաշխառուների ճանկերից:

Ամեն մի երկրի տնտեսական բարեկեցութիւնը կախւած է այդ երկրի արդիւնաբերութիւնը և առևտուրը կարգացած են, այնչափ հարուստ է այդ երկրը, այնչափ բարեկեցիկ է նրա ժողովրդութեան պուրդը. իսկ երկրի արդիւնաբերութիւնը պուրդը չամար, բաւական չէ որ այդ երկիրը ունենայ բնական հարստութիւններ կամ նրա ազգաբնակութիւնը օժտւած լինի ընդունակութիւններով, այլ հարկաւոր է նաև մի ուրիշ բան—դա կապիտալն է իր

ընդարձակ իմաստով, դա նիւթական միջոցներն են։ Առանց կապիտալի մասնակցութեան անկարելի է որևէ աշխատանք արդիւնաւէտ դարձնել, ուստի պարզ է ո՞ր մեր գիւղացիների աշխատանքը աւելի ևս արդիւնաւէտ դարձնելու համար անհրաժեշտ է նրան մատակարարել նիւթական միջոցներ, անհրաժեշտ է նրա համար ստեղծել աժան վարկ և միայն այն ժամանակ նա կարող է վերականգնել իր քայլքայւած տնտեսութիւնը, միայն այն ժամանակ նա կարող է զարգացնել նաև կօօպերացիայի միւս ճիւղերը։ Պարզ է թէ ես ինչու եմ շեշտում մանր վարկի կարեռութիւնը, մասնաւանդ մեր գիւղացիների համար, որոնք ազատւելով գիւղական վաշխառուներից ազատ շունչ կառնեն և հնարաւորութիւն կունենան ոչ միայն պահպանելու իրենց տնտեսութիւնը, այլ և հետզհետէ բարձրացնելու և բարելաւելու միջոցներ կունենան։

Միանգամայն իրաւացի նկատում է սօց. Ալաբրիոլան, թէ՝ «ինչ ուզում են թողարկութեան մասին, սակայն չի կարելի ուրանալ, որ նրանք տւել են և կըտան խոշոր օգուտներ ժողովրդին»։ Այդ օգուտները ակներկ են և դա փաստ է այնտեղ, ուր կան մանր վարկի ընկերութիւններ։

Այսպիսով՝ ընդունելով կօօպերացիայի անհրաժեշտութիւնը մեր երկրի տնտեսութեան զարգացման համար, ես դարձեալ շշտում եմ, որ կօօպերացեան մեղ համար նպատակ չպիտի լինի, այլ մի փառահեղ միջոց բարելաւելու աշխատաւորների նիւթականը, ազատւելով նրան միջնորդ-վաճառականների անկուշու շահատակութիւններից։ Կօօպերացիան մի գպրոց է, ուր աշխատաւորը ստանում է տնտեսական և առևտրական կրթութիւն։ ահաւասիկ կօօպերացիայի համեստ գերը։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|   |            |
|---|------------|
|   | <i>իր.</i> |
| <b>1. Յառաջաբան</b>   | <b>1</b>   |
| <b>2. Պատմական համառոտ ակնարկ</b>                                   | <b>7</b>   |
| <b>3. Կօօպ. շարժումը արևմտքան Եւրոպայում</b>                        | <b>33</b>  |
| <b>4. Սպառողական, արտադրողական և գարկային ընկերութիւններ</b>        | <b>51</b>  |
| <b>5. Կօօպ. կարևորութիւնը մեր երկրի անտեսութեան զարգացման համար</b> | <b>81</b>  |

**Վ Բ Ի Պ Ա Կ**

| <i>իր.</i> | <i>տաղած է</i> | <i>մոռովից</i> | <i>ուժութեան էլ լինի</i> |
|------------|----------------|----------------|--------------------------|
| 12         | Généraux       | 7              | Générales                |
| 13         | գործակատարին   | 7              | գործարանտառէրի           |
| 15         | որ             | 18             | և                        |
| 16         | անհրաժեշտ      | 1              | անհրաժեշտ է              |
| 18         | շարժան         | 23             | շարժման                  |
| 19         | ըերենք         | 11             | ըերենք                   |
| 20         | արտարողութեան  | 15             | արտադրութեան             |
| 21         | կըտեր          | 18             | հիմունքներ.              |
| 22         | Kooperative    | 11             | Cooperative              |
| 23         | De             | 3              | Dic                      |
| 24         | իզուր          | 22             | ապարդիւն                 |

| 10 | 10 | 10 | 10 |
|----|----|----|----|
| 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 |

Պատրաստ են տպագրութեան համար  
նոյն հեղինակի հետեւեալ աշխատու-  
թիւնները՝

1. «Գիւղական կօօպերատիւ միութիւնները»  
Մասն II (գասալասութիւն)
2. Զեռնարկ հաշւապահութեան դիւղական  
կօօպ. միութիւնների համար.
3. Մաթեմատիկական նախակրթութիւն.  
թարգմ. Փրանսերէնից:

---

Թարգմանում եմ՝

1. Кулъжный „Крестьянство и Союзы“.
- 

Դիմել հայ գրավաճառներին կամ հե-  
ղինակին Տիպографія „Эпоха“, Գան. 3.

«Ազգային գրադարան



NL0205438

25.734